

## **ԼՂԻ ՀՈՒՐՋ ԸՆԹԱՑՈՂ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ Գազիկ Տեր-Չարությունյան**

Արդեն երկար ժամանակ է, ինչ եԱՅԿ Մինսկի խմբի համաձայնագահները հետեւողականորեն այցելում են տարածաշրջան եւ տարաբնույթ, երբեմն հակասական հայտարարություններ անում Լեռնային Ղարաբաղի շուրջ ընթացող զարգացումների վերաբերյալ: Ավանդույթ են դարձել, մասնավորապես, այն հայտարարությունները, թե հերթական տարվա աշնանը կամ գարնանը ԼՂ հարցի կարգավորման խնդրում կլինեն որակական փոփոխություններ: Ջանգվածային լրատվամիջոցներն, իրենց հերթին, արձագանքում են այդ հայտարարություններին՝ երբեմն խեղաթյուրելով կամ յուրովի մեկնաբանելով ստացված տեղեկատվությունը: Այդ տեղեկատվական շղթայի շարունակությունն են կազմում այն ընկալումները, որոնք ձեւավորվում են հանրությունում:

Մինչդեռ, ըստ աշխարհաքաղաքական տրամաբանության, Ղարաբաղի խնդիրը, կարելի է ասել, կարգավորված է: Կար Լեռնային Ղարաբաղի մարզը, որը հայտնի գործընթացների արդյունքում ներկայումս վերածվել է ԼՂ հանրապետության, եւ այդ իրողությունը, աշխարհաքաղաքական բալանսի տեսանկյունից, խնդրի լավագույն լուծումն է, թերեւս:

Այս առիթով նկատենք, որ խիստ շահարկվող՝ ազգերի ինքնորոշման եւ տարածքային ամբողջականության հաճախ իրարամերժ սկզբունքները հակամարտությունների խնդրին նվիրված արդի քաղաքագիտական գրականությունում համարվում են արդեն փոքր-ինչ հնացած եւ ոչ կառուցողական: Ինչո՞ւ:

Խորհրդային համակարգի փլուզումից հետո տեղի են ունեցել գործընթացներ, որոնք նոր աշխարհաքաղաքական իրավիճակ են ստեղծել: Ձեւավորվել են անկախ հանրապետություններ ԽՍՀՄ տարածքում, Չարավսլավիայում, բաժանվել է Չեխոսլովակիան, այսօր ակտիվորեն քննարկվում է Կոսովոյի հիմնախնդիրը եւ այլն: Փաստն այն է, որ խոշոր աշխարհաքաղաքական տեղաշարժերի հետեւանքով հետսառըպատերազմյան նոր իրողություններ են ձեւավորվել, որոնց հիմնական մասն ամրագրվել եւ ընդունվել է միջազգային հարաբերությունների հարթությունում, իսկ մի մասը դեռեւս վերջնական ձեւակերպումներ չի ստացել: Այսօր միջազգային փորձագիտական հանրությունում տարածում է գտնում այն մոտեցումը, որ եղած խնդիրներին լուծում տալու

համար ավելի իրատեսական սկզբունքներ պետք է մշակվեն: Օրինակ՝ նշվում է քաղաքակրթական գործոնը, որի համաձայն՝ պետք է կարելուրել այս կամ այն ազգի քաղաքակրթական պատկանելությունը եւ նախապատվություն տալ ազգերի վերամիավորման գործընթացին: Այսինքն՝ թերեւս ժամանակն է հրաժեշտ տալ նախկին քաղաքական եզրաբանությանը եւ առաջնորդվել ավելի բովանդակային ու գլխավորը՝ իրականությանը համարժեք կատեգորիաներով:

Այս ամենի համատեքստում կա մի առանցքային խնդիր՝ ազատագրված տարածքների խնդիրը: Ակնհայտ է, որ այդ տարածքներն անվտանգության իրական եւ ռազմավարական երաշխիք են ոչ միայն ԼՂՀ-ի, այլեւ ՀՀ-ի համար: Ակնհայտ է, որ դրանք տեսականորեն հնարավոր կլինի վերադարձնել միայն եւ միայն այն պարագայում, երբ անվտանգության լիարժեք երաշխիքներ լինեն: Առայժմ պաշտոնական Բաքուն, առնվազն տեղեկատվական ոլորտում, հիմնական շեշտադրումները դնում է խնդրի լուծման ուժային տարբերակի վրա. հաճախ կարելի է լսել, որ նավթային վաճառքի շնորհիվ ռազմական բյուջեն կհասցվի մինչեւ 1 միլիարդ դոլարի, ինչը եւ թույլ կտա դիմել ռազմական միջոցների ԼՂՀ խնդրում:

Անշուշտ, Ադրբեջանի տնտեսական աճը՝ կապված նավթի հետ, չի կարելի անտեսել: Միեւնույն ժամանակ, չի կարելի անտեսել նաեւ մեկ այլ, ավելի կարելուր իրողություն: Օտարերկրյա եւ միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կողմից տրվող վարկանիշային ցուցանիշներով, որոնք վերաբերում են այս կամ այն պետության կայացած լինելուն, մարդկային զարգացմանը, տնտեսական ազատությանը, ՀՀ-ն էապես գերազանցում է Ադրբեջանին: Այս իրողությունը պարունակում է նաեւ Հայկական բանակի բարձր վարկանիշը: Այս առումով՝ չի կարելի բացառել, որ Ադրբեջանի նման ռազմատենչությունը կարող է տխուր հետեւանքներ ունենալ այդ պետության համար: Թերեւս, այս իրողությունը գիտակցում են նաեւ Ադրբեջանում: Սակայն բոլոր պարագաներում չպետք է մոռանալ այն հիմնական սկզբունքը, համաձայն որի՝ «եթե խաղաղություն ես ուզում, պատրաստ եղիր պատերազմի»:

Միեւնույն ժամանակ, ռազմական գործողությունների վերսկսման հավանականությունը ցածր է նաեւ հետեւյալ պատճառներով: Այսօր գրեթե բացառվում է, որ որեւէ առանձին պետություն պատերազմի եւ խաղաղության հարցը լուծի ինքնուրույնաբար: Ադրբեջանը մի տարածք է, որտեղ կենտրոնացած են նավթային խոշոր ընկերությունների կամ, այլ ձեւակերպմամբ՝ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի եւ եվրոպական մի շարք երկրների աշխարհատնտեսական շահերը. այդ տերությունները պետք է

ծգտեն առավելագույնս նվազեցնել ցանկացած ձեւաչափի պատերազմական գործողությունների հնարավորությունը:

Այլ խնդիր է Թուրքիան, որը Ղարաբաղյան հակամարտության առաջին իսկ օրերից անթաքույց ռազմական օժանդակություն է ցուցաբերում Ադրբեջանին: Սակայն այդ նախկին կայսրությունն այսօր բազմաթիվ արտաքին եւ ներքին քաղաքական խնդիրներ ունի եւ, Ցեղասպանության խնդրի առումով նաեւ, արդեն իսկ գտնվում է միջազգային հանրության ճնշման տակ: Այսպիսով, այսօր Թուրքիայի համար Ադրբեջանին պատերազմի հրահրելը կարծես թե հեռանկարային չէ: Այս համատեքստում պետք է շեշտել նաեւ Ռուսաստանի տարածաշրջանային կարելոր դերակատարումը եւ, մասնավորապես, Յավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության գլխավոր քարտուղարի այն հայտարարությունը, որ եթե խախտվեն Յայաստանի սահմանները, ապա կծեռնարկվեն համապատասխան գործողություններ:

Ամփոփելով վերոնշյալ համառոտ դիտարկումները՝ կարելի է գալ հետեւյալ եզրահանգումների.

❖ ԼՂՀ շուրջ ընթացող բանակցային գործընթացի տրամաբանությունը ենթարկվելու է ձեւավորված աշխարհաքաղաքական իրողությունների, որում ԼՂՀ-ն փաստացիորեն հանդես է գալիս որպես ինքնուրույն միավոր: ԵԱՀԿ Մինսկի խմբի առաքելությունը լինելու է այդ իրողության ամրագրումը միջազգային իրավունքի եզրաբանությամբ:

❖ Ոչ բանակցային, ուժային եղանակով ԼՂՀ խնդրի լուծման ադրբեջանական կամ թուրքական տարբերակները նախաձեռնողների համար պարունակում են լուրջ ռիսկեր եւ հակասում են տարածաշրջանում աշխարհատնտեսական խնդիրներ ունեցող տերությունների շահերին: Այդ գործոնները թեեւ իսպառ չեն բացառում, սակայն զգալիորեն նվազեցնում են ռազմական գործողությունների վերսկսման հավանականությունը:

❖ Այս ամենի համատեքստում՝ «ԼՂՀ խնդրի լուծում» հասկացությունը պայմանական բնույթ է ձեռք բերել: Փաստացի ՀՀ-ի հետ միավորված ԼՂՀ-ի համար միջազգային իրավունքի սուբյեկտ դառնալը, թերեւս, այդքան էլ հրատապ չէ: Այս առումով, ԼՂՀ դիրքերը շահեկան են, եւ ժամանակը, այդ համատեքստում, աշխատում է մեր օգտին:

**ՀԱՅ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԻՍԼԱՄԱՑՈՒՄԸ  
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ  
Ռուբեն Մելքոնյան**

Թյուրքական ցեղերի Փոքր Ասիա եւ Հայկական լեռնաշխարհ ներխուժելուց հետո այդ տարածքներում պարբերաբար տեղի է ունեցել ոչ մուսուլման բնակչության բռնի իսլամացում: Կրոնափոխության հարմար թիրախներից են միշտ համարվել երեխաները, որոնց իսլամացնելով վաղ տարիքում՝ կարելի էր ավելի հեշտ ջնջել ազգային եւ կրոնական դեռեւս ձեւավորվող ինքնագիտակցությունը: Հենց այս տրամաբանությամբ է գործել Օսմանյան կայսրությունում մեծ տարածում գտած եւ երկար դարեր կիրառված մանկահավաքի (դելշիրմե) ինստիտուտը, որն ունեցել է նաեւ «արյան հարկ» անվանումը: Մանկահավաքի ժամանակ կայսրության ոչ մուսուլման բնակչությունից հավաքվել են փոքրահասակ տղա երեխաները, որոնց տրվել է կրոնական եւ ռազմական կրթություն, եւ հենց նրանցից էլ ձեւավորվել են ենիչերիների զորագնդերը:

Հայերը, լինելով Օսմանյան կայսրության ոչ մուսուլման հիմնական ազգերից մեկը, բնականաբար, պարբերաբար ենթարկվել են բռնի իսլամացման, որը տարբեր ժամանակներում ունեցել է տարբեր ծավալներ: Հայտնի է, որ հայերի իսլամացման վերջին լայնածավալ ակցիան տեղի է ունեցել Հայոց ցեղասպանության տարիներին: Եղել են դեպքեր, երբ կրոնափոխության շնորհիվ որոշ հայեր խուսափել են արքայից եւ ջարդից, բայց դա չի ընդգրկել լայն ծավալներ, քանի որ 1915-ին հիմնական նպատակը եղել է ոչ թե ձուլել, այլ ընդհանրապես ոչնչացնել հայ էթնոսը: Նշենք, սակայն, որ ցեղասպանության տարիներին «կամովին» մուսուլմանություն ընդունելու հայերի պատրաստակամությունը ոչ միշտ է միանշանակ հավանության արժանացել կառավարության կողմից, եւ այս առումով հետաքրքիր է ներկայումս Թուրքիայի կառավարության (վարչապետի աշխատակազմի) օսմանյան արխիվում պահպանված՝ ներքին գործերի նախարարության 1915թ. հունիսի 30-ին հայաբնակ նահանգներ ուղարկված ծածկագիր գրությունը, որտեղ ասվում է, որ հայերի կրոնափոխությունը չի կարող խոչընդոտ հանդիսանալ նրանց արքայից: Ավելացվում է, որ վտանգի պահին հայերը բազմիցս են դիմել նման մեթոդի, սակայն հետո շարունակել են գործել մուսուլմանների դեմ:

Սակայն, չնայած այս զգուշացմանը, եղել են որոշ բացառություններ, եւ արձանագրվել են դեպքեր, երբ իսլամացումը, այնուամենայնիվ, փրկել է գաղթից եւ կոտորածից, վկա՝ ներկայիս Թուրքիայում ապրող ծայտյալ հայերը:

Ինչպես վկայում են մի շարք աղբյուրներ, այդ թվում եւ թուրքական, Չայոց ցեղասպանության տարիներին մեծ թվով հայ երեխաներ են առեւանգվել թուրքերի եւ քրդերի կողմից: Շատ հազվադեպ իրենք՝ հայերը, աքսորի գնալիս, զգալով մոտալուտ արհավիրքը, իրենց երեխաներին կամովին պահ են տվել հարեւան մուսուլմաններին (այդ երեխաները թուրքական աղբյուրներում անվանվում են «ավանդ թողնված երեխաներ»): Որք մնացած հայ երեխաների մի մասն էլ օսմանյան կառավարության հրամանով հավաքվել է թուրքական որբանոցներում եւ իսլամացվել: Այս մասին վկայող փաստեր են պահպանված օսմանյան արխիվներում: Թուրք գիտնական Իբրահիմ Էթեմ Աթնուրի 2005թ. տպագրած «Չայ կանանց եւ երեխաների խնդիրը Թուրքիայում 1915-1923թթ.» գրքում օգտագործված են այդ թվականներին որք եւ այրի հայ երեխաների ու կանանց խնդրի վերաբերյալ բազմաթիվ արխիվային նյութեր, այդ թվում նաեւ Թուրքիայի վարչապետի աշխատակազմին կից օսմանյան արխիվի ծածկագիր բաժնի նյութերը: Բնականաբար, շարունակելով թուրքական «գիտական» ավանդույթները՝ հեղինակն աղավաղում է փաստերը կամ ներկայացնում իր ոչ օբյեկտիվ ու ոչ տրամաբանական գնահատականները տվյալ հարցի շուրջ. սակայն մեզ համար կարեւոր են գրքում տեղ գտած հատկապես արխիվային նյութերը, որոնք հետաքրքիր փաստեր են պարունակում: Համադրելով այս եւ այլ աղբյուրների ներկայացրած փաստերը՝ կարելի է եզրակացնել, որ Չայոց ցեղասպանության տարիներին հայ երեխաների բռնի իսլամացումն ու ձուլումը կատարվել են երկու մակարդակով՝ պետության եւ հասարակության լայն խավերի կողմից: Այս փաստը թուրքերը չեն էլ ժխտում, ուղղակի փորձ է արվում դա ներկայացնել այլ լույսի ներքո եւ օգտագործել քարոզչական նպատակով:

1. Կոտորածից փրկված, անտեր, անտուն, անխնամ մնացած հայ որբ երեխաները պետության աջակցությամբ իսլամացվել են եւ բաժանվել մուսուլման ընտանիքներին: Դա է վկայում օսմանյան արխիվում պահպանված 1915թ. հուլիսի 10-ի թվագրված գրությունը, որտեղ ասվում է, որ իսլամացված որբ հայ երեխաներին պետք է հանձնել բարեկեցիկ մուսուլման ընտանիքներին եւ հատկապես այն գյուղերում ու գյուղաքաղաքներում, ուր հայեր չկան: Եթե երեխաների թիվը մեծ է, նրանց պետք է հանձնել դժվարությամբ ապրուստը հոգող մուսուլման ընտանիքներին

Եւ ամեն երեխայի համար ամսական նրանց վճարել 30 քուրուշ: Պետք է ցուցակագրել այդ երեխաների թվի եւ գտնվելու վայրերի մասին տվյալներն ու դրանք ուղարկել կենտրոն: Հատուկ նշվում է, որ այս երեխաները հանձնվում են այդ ընտանիքներին այն պայմանով, որ նրանց տրվի մուսուլմանական կրթություն: Նույնաբովանդակ գրություններ հանդիպում են նաեւ հետագայում՝ ուղղված տարբեր նահանգների ղեկավարներին: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ բոլոր այդ գրություններում հատուկ նշվում է, որ երեխաներին պետք է բաժանել հատկապես այն վայրերում, ուր չկան հայեր: Նպատակն այն է, որ թեկուզ հետագայում էլ այդ երեխաները հնարավորություն չունենան շփվել իրենց ազգակիցների հետ եւ շատ հեշտությամբ ծուլվեն ու իսլամանան:

Սրան զուգահեռ՝ օսմանյան կառավարությունը, չնայած պատերազմական վիճակին, ինքն էլ է նախաձեռնում որբանոցներ բացել, ուր հավաքվում են որբ հայ երեխաները: Բնականաբար, այդ որբանոցներում հավաքված հայ երեխաները իսլամացվում էին, ստանում մուսուլմանական կրթություն, եւ այդ ամենը՝ պետական ամենաբարձր հսկողության ներքո: Օսմանյան արխիվներում պահպանվել են երիտթուրքական պարագլուխ Էնվերի գրությունները՝ ուղղված ներքին գործերի նախարար Թալեաթին, որտեղ նա ցանկություն էր հայտնում եւ պահանջում, որ որբ հայ երեխաներն ուղարկվեն հատկապես թուրքական որբանոցներ (այդ տարիներին Օսմանյան կայսրության տարածքում գործում էին եվրոպական, ամերիկյան, միսիոներական որբանոցներ եւս): 1916թ. մայիսի 9-ի՝ ներքին գործերի նախարարությանն ուղղված գրության մեջ Էնվերը գրում է. «Կրոնափոխ եւ ոչ կրոնափոխ հայ որբերը եթե ուղարկվեն մեր որբանոցներ, ես պատրաստ եմ ռազմական բյուջեից հոգալու դրա համար անհրաժեշտ ծախսերը»: Քանի որ որբանոցները ենթակա էին կրթության նախարարությանը, Թալեաթը, կրթության նախարարի համաձայնությունը ստանալուց հետո, 1916թ. մայիսի 16-ին տեղեկացնում է Էնվերին, որ իսլամացած եւ ոչ իսլամացած հայ երեխաները կվերցվեն թուրքական որբանոցներ, եւ ծախսերը կհոգա ներքին գործերի նախարարությունը: Վրդեն 1916թ. հունիսի 1-ի՝ Մարդինի նահանգապետարան կրթության նախարարության ուղարկած ծածկագիր հեռագրում նշվում է, որ Մարդինի որբանոց պետք է վերցնել միայն իսլամացած հայ երեխաներին: Ավելի վաղ՝ 1916թ. ապրիլի 30-ին, ներքին գործերի նախարարության՝ հայ կանանց եւ երեխաների վերաբերյալ հրապարակած ընդհանուր հրամանի 3-րդ կետում հստակ նշվում է. «Մինչեւ 12 տարեկան հայ երեխաներին վերցնել մեր որբանոցները»:

Որբ հայ երեխաների իսլամացման եւ ձուլման հարցով բավական

հետաքրքրված մյուս բարձրաստիճան պաշտոնյան հայտնի երիտթուրքական պարագլուխ Ջենալ փաշան է, որը զբաղվել է Սիրիայում եւ Լիբանանում գտնվող հայ որբերի հարցերով: Նրա նախաձեռնությամբ Ային Թուրա ֆրանսիական ճիզվիտական միսիային պատկանող մենաստանում ստեղծվել է որբանոց, ուր հավաքվել են հայ երեխաները՝ թուրքացվելու նպատակով: Հատուկ այս գործի համար Ջենալը Ստամբուլից հրավիրել է պանթուրքիստ կին գրող Հալիդե Էդիբին, որը հայտնի է ցեղասպանության տարիներին հայ երեխաների իսլամացման եւ թուրքացման գործում իր ակտիվ ջանքերով: Հենց նույն Հալիդե Էդիբը հետագայում գրում է, որ Ային Թուրա որբանոցի իսլամացած հայ բոլոր երեխաներին տրվել էին թուրքական կամ մուսուլմանական անձնանուններ:

2. Հայ երեխաների իսլամացման եւ թուրքացման գործում մեծ ջանքեր են գործադրել նաեւ թուրքական հասարակության լայն շրջանակները: Ինչպես նշեցինք, Հայոց ցեղասպանության տարիներին թուրքերը եւ քրդերն առեւանգել եւ խլել են բազմաթիվ հայ մանուկների եւ իսլամացրել: Թուրքական կողմը, չկարողանալով ժխտել այս անառարկելի փաստը, միեւնույն ժամանակ շրջանառության մեջ է գցել այն վարկածը, թե իբր «բարեգութ» թուրքերն ուղղակի հումանիտական զգացումներից ելնելով՝ «փրկել» են աքսորյալ հայ երեխաներին: Անշուշտ, կարելի է ընդունել, որ երբեմն, շատ հազվադեպ դա տեղի է ունեցել, բայց գերակշիռ դեպքերում հայ երեխաներին խլել են՝ բռնությամբ նրանց իսլամացնելու, թուրքացնելու նպատակով, եւ դա անելիս առաջնորդվել են ոչ թե հումանիտական, այլ զուտ անձնական, տնտեսական նկատառումներով: Հասկանալու համար թուրքերի եւ քրդերի՝ աքսորյալ հայ երեխաներին «փրկելու» եւ իսլամացնելու շարժառիթները, մեր կարծիքով, ամենեւին երկրորդական չպետք է համարել իսլամա-թուրքական իրականության որոշ նրբերանգներ: Խլելով եւ ձուլելով հայ երեխաներին՝ թուրք եւ քուրդ գյուղացիները մի կողմից ձեռք էին բերում ձրի աշխատուժ եւ, մյուս կողմից, հատկապես հայ աղջիկ երեխաները դառնում էին նրանց հարեմների զոհը: Մի կարեւոր նրբերանգ էլ կա՝ կապված իսլամա-թուրքական ամուսնության սովորույթների հետ, համաձայն որի՝ տղայի կողմն ուղղակի գնում է հարսին՝ նրա ծնողներին վճարելով որոշակի գումար: Ձեռք բերելով հայ աղջիկ երեխաներին, ինչպես ցույց են տալիս բազմաթիվ փաստերը, նրանք այնուհետեւ այդ աղջիկներին ամուսնացնում էին իրենց տղաների հետ՝ այդպիսով խուսափելով նաեւ ամուսնական «գլխագին» վճարելու ծանր պարտականությունից: Բացի այդ, առեւանգված եւ իսլամացված հայ երեխաները նաեւ վաճառվել են, ու դա

եղել է տարածված եկամտի աղքատ առեւանգիչների համար: Այս ամենը լիովին տեղավորվում է ստրկավաճառություն բնորոշման սահմաններում, մանավանդ, եթե հաշվի առնենք, թե ինչ հարուստ է Օսմանյան կայսրության փորձն այդ ասպարեզում: Ներկայումս էլ Թուրքիայում ծայր առած «էթնիկ ճգնաժամի» քննարկման շրջանակներում անընդհատ ի հայտ են գալիս նոր փաստեր ցեղասպանության ժամանակ առեւանգված հայ երեխաների, հատկապես աղջիկների մասին, որոնց մուսուլմանների հետ ամուսնության հետեւանքով ներկայիս Թուրքիայում ձեւավորվել է խառնածինների հոծ բանակ, որոնք հայկական արյան որոշակի տոկոս ունեն:

Այսպիսով, վերոնշյալ փաստերի զուգադրման արդյունքում ի հայտ են գալիս թուրքական «գիտական» շրջանակների եւ քարոզչամեքենայի արդեն ավանդական դարձած զեղծարարության՝ պարզունակության հասնող թուլությունը եւ անտրամաբանական լինելը: Փաստերը նաեւ հստակ ցույց են տալիս, որ օսմանյան ղեկավարությունը եւ հասարակության լայն շերտերը, Հայոց ցեղասպանության տարիներին բռնի իսլամացնելով հայ որբ երեխաներին, շարունակել են ոչ մուսուլման ազգերի ձուլման քաղաքականությունը եւ դրանով էլ ավելի խճճել իրենց առանց այդ էլ խառնիճաղանջ էթնիկ նկարագիրը:



**ՀՈԼՈՔՈՍԻ ՄԱՍԻՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆ  
ԻՍՐԱՅԵԼՈՒՄ. ՅԱԴ ՎԱՇԵՄ**  
**Հարություն Մարության**

Պետությունները՝ ուժեղ թե թույլ, իրենց ներքին եւ արտաքին քաղաքականության հիմնադրույթների մշակման մեջ, որպես կանոն, ձգտում են հաշվի առնել իրենց ժողովրդի ինքնության հիմնարար տարրերը: Այսպես թե այնպես, դրանցում տեսակարար մեծ կշիռ ունեն պատմական անցյալի հետ անխախտ կապը մատնանշող իրադարձություններով պայմանավորված դրույթները: Այդ անցյալն իր մեջ կարող է կրել ինչպես տրավմատիկ երանգներ ունեցող, նույնպես եւ հերոսական պայքար ու հաղթանակներ մատնանշող հիշողությունների տարրեր: Դրանց համակցված օգտագործումը թույլ է տալիս պետություններին անհրաժեշտության դեպքում քաղաքական կուրսում որոշ, իրավիճակի թելադրանքով պայմանավորված շեշտադրումներ անել: Կան պետություններ, որոնց համար հենց դաժան հետեւանքներ ունեցող անցյալի իրադարձություններին հենվելն է դարձել քաղաքական կուրսի կարելորագույն, եթե ոչ միակ ճանապարհ աշխարհում իրենց ես-ը հաջողությամբ ներկայացնելու գործում:

Հիշողության վրա հենված քաղաքականությունը բյուրեղացվում է տասնամյակների ընթացքում, եւ նրա ազդեցությունը հասարակության վրա միանգամից ու անմիջապես չէ, որ երեւում է: Երբեմն հիշողության գործոնը լոկ ինքնաբուխ ձեւով դրսեւորվում է տվյալ հասարակության համար ճգնաժամային պահերին, երբեմն՝ համապատասխան մշակվածության պարագայում, մշտապես ներկա է հասարակության ամենօրյա կյանքում, նրա ինքնադրսեւորման եւ ինքնության անքակտելի մասն է կազմում: Այդ քաղաքականությունը բաղկացած է միմյանց հետ անտեսանելի թելերով կապված բազմաթիվ կտորներից, որոնցից յուրաքանչյուրը, առանձին վերցրած, կարող է եւ էական չթվալ երկրի քաղաքական կուրսը մշակողների համար, սակայն, թերեւս, այդ տարրերի համակցումն է, որ կազմում է հիշողության վրա հենված քաղաքականության ամբողջությունը:

Հիշողության գործոնին հենված քաղաքականության հիմնարար մասը, թերեւս, կազմում է տվյալ ժողովրդի ինքնության համար կարելորագույն նշանակություն ունեցող իրադարձության (իրադարձու-

թյունների) վերաբերյալ *հիշողության գրանցմանն ու պահպանմանն* ուղղված համալիր միջոցառումների շարքը: Դրանց թվում իրենց կարելի է համարել, անփոխարինելի տեղն ունեն թանգարանները: Արդ, թանգարանային ինչպիսի՞ մատուցմամբ է իրականացվում Հոլոքոստի (Եբրայերեն՝ Շոա) մասին հիշողության պահպանության գործն Իսրայելում:

\* \* \*

Հրեա ժողովրդի եվրոպական հատվածի աղետի զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրը կոչվում է «Յադ Վաշեն. Հոլոքոստի նահատակների եւ հերոսների [մասին] հիշողության [պահպանման] իրավասու մարմին»: «Յադ Վաշեն» արտահայտությունը եբրայերեն լեզվում թարգմանաբար նշանակում է «ծեռք (հուշարձան) եւ անուն» եւ վերցված է Հին Կտակարանի Եսայիայի գրքից, որտեղ մարգարեն Աստծո անունից վստահեցնում է անզավակ հրեաներին, որ նրանք ապագա սերունդներում չեն մոռացվի: Հուշահամալիրը կառուցված է Երուսաղեմում, սիոնիզմի հիմնադիր Հերցելի անունը կրող լեռան եւ Ձիմվորական գերեզմանոցի մոտ, ինչը վկայում է այդ կառույցին տրվող իմաստի նշանակության մասին Իսրայելի համար:

Յադ Վաշենը հիմնադրվել է 1953թ. Իսրայելի կնեսետի որոշմամբ: Գործունեության սկզբնավորումից ի վեր Յադ Վաշենին է վստահվել Հոլոքոստի տարիներին հրեա ժողովրդի պատմության վավերագրերի հավաքագրումը, վեց միլիոն զոհերից յուրաքանչյուրի մասին կենսագրական տվյալների եւ հիշողության պահպանումը, հուշահամալիրի կազմում գտնվող արխիվների, գրադարանի, դպրոցի, թանգարանների միջոցով Հոլոքոստի ժառանգության մասին տվյալների հաղորդումը գալիք սերունդներին, ինչպես նաեւ Ազգերի միջից առաքինի անհատների ընտրության գործը: Համալիրը ներկայացնում է ընդարձակ, շուրջ 45 հա զբաղեցնող մի տարածք, որտեղ հետիոտնի համար նախատեսված ծառուղիներն այցելուներին ուղղորդում են դեպի թանգարաններ, ցուցասրահներ, արխիվներ, հուշարձաններ, արձաններ եւ հուշային գործառույթ ունեցող այլ կառույցներ: Եբրայերեն, անգլերեն եւ ֆրանսերեն լեզուներով ստեղծված է նաեւ աուդիո էքսկուրսիաների հնարավորություն: Տարեկան Յադ Վաշեն է այցելում ավելի քան 2 մլն մարդ:

Յադ Վաշենի կազմում է գտնվում Հոլոքոստի մասին նյութեր պարունակող աշխարհում ամենամեծ արխիվային հավաքածուն: Այն ձեւավորվել է տասնամյակների ընթացքում եւ պարունակում է 62 մլն էջ

տպագիր եւ անտիպ փաստաթղթեր, 267500 լուսանկարներ, հազարավոր ֆիլմեր եւ Յոլոքոստը վերապրածների տեսանկարահանումներ: Նյութերի մեծ մասը ենթակա է ազատ օգտագործման, ինչին են ուղղված նաեւ համապատասխան կահավորմամբ բաժանմունքները: Այստեղ են պահվում Շոան վերապրողների կողմից Իսրայելում կամ այլ երկրներում տարբեր լեզուներով թելադրված, ձայնագրված կամ տեսանկարահանված տասնյակ հազարավոր վկայություններ: Վկայությունների երկրորդ տիպը՝ վկայությունների էջերը, վերապրողների կամ զոհերի ազգականների կողմից լրացված հատուկ ձեւակներ են, որոնք պարունակում են տվյալներ անհատ զոհերի մասին: Շուրջ 2 մլն վկայություններ այս պահին թվայնացված են եւ մատչելի են հասարակությանը Շոայի զոհերի անունների տվյալների կենտրոնական էլեկտրոնային շտեմարանի միջոցով, որտեղից, ընդհանուր առմամբ, կարելի է տվյալներ քաղել 3,2 մլն զոհերի մասին: Դեռեւս չթվայնացված նյութերը դրանցով հետաքրքրվողների համար մատչելի են արխիվի աշխատակիցների օժանդակության շնորհիվ: Անտիպ փաստաթղթերը պարունակում են տվյալներ հրեաների ոչնչացմամբ զբաղվող նացիստական միավորումների մասին, ինչպես նաեւ հրեա մարդկանց նամակներ, անձնագրեր, օրագրեր եւ հուշագրություններ, հրեական կազմակերպությունների փաստաթղթեր, հրեաներից բռնագրավված արժեքների ցուցակներ, աքսորվածների, զոհերի եւ վերապրողների ցուցակներ, նացիստական հանցագործների ու նրանց հետ համագործակցողների նկատմամբ տարվող դատավարությունների նյութեր եւ այլն:

Հուշահամալիրի գրադարանում կան շուրջ 100 հազ. անուն գրքեր բազմաթիվ լեզուներով, 4 հազ. անուն թերթերի եւ ամսագրերի հավաքածուներ, ինչի շնորհիվ էլ այն դառնում է Հոլոքոստին նվիրված ամենամեծ գրադարանն աշխարհում:

Անունների սրահը հարգանքի տուրք է զոհերին՝ նրանց ոչ թե որպես անանուն թվեր, այլ որպես անհատ մարդկային էակներ հիշելու ճանապարհով: Նույն կերպ եւ 1955թ. ի վեր աշխարհով մեկ հավաքվող «վկայությունների էջերը» խորհրդանշական տապանաքարեր են, որոնք գրանցում են միլիոնավոր զոհերի ընտանիքի անդամների եւ ընկերների կողմից տրամադրված անունները եւ կենսագրական տվյալները: Անունների սրահի կոնաձեւ առաստաղին ներսի կողմից փակցված են վկայությունների էջերի 600 լուսանկարներ եւ հատվածներ: Անունների սրահի վերջնամասում ապակյա էկրան է, որտեղ պրոյեկտվում են վկայությունների էջերը: Այստեղ ամեն ոք կարող է սրահի աշխատակիցների օժանդակությամբ մուտք գործել համակարգիչ եւ որոնում

կատարել Շոայի զոհերի անունների տվյալների կենտրոնական էլեկտրոնային շտեմարանում:

Հուշահամալիրի տարածքում է գտնվում նաև 1993թ. հիմնված Հոլոքոստի ուսումնասիրությունների միջազգային դպրոցը, որը նման բնույթի միակ հաստատությունն է աշխարհում: Այն ունի 17 դասասենյակներ, արդիական կահավորմամբ մուլտիմեդիա կենտրոն, ռեսուրսների եւ մանկավարժության կենտրոն, մեծ դասասրահ եւ շուրջ հարյուր մանկավարժներից բաղկացած անձնակազմ, որը տարվա կտրվածքով սպասարկում է ավելի քան 100 հազ. աշակերտների եւ երիտասարդների, 50 հազ. զինծառայողների: Ամեն տարի այստեղ են վերապատրաստվում հազարավոր մանկավարժներ ինչպես Իսրայելից, այնպես էլ աշխարհի տարբեր երկրներից: Այստեղ են մշակվում Հոլոքոստի դասավանդման համար ուսումնական ծրագրեր, դասագրքեր, քարտեզներ, տեսաժապավեններ եւ այլ անհրաժեշտ նյութեր:

Հոլոքոստի ուսումնասիրության միջազգային ինստիտուտը համակարգում եւ օժանդակում է ազգային եւ միջազգային մակարդակներով տարվող ուսումնասիրությունները, կազմակերպում է գիտաժողովներ, սեմինարներ, հրատարակում է Հոլոքոստին նվիրված բազմաթիվ կարեւոր ուսումնասիրություններ, այդ թվում՝ հուշագրություններ, օրագրեր, պատմական հետազոտություններ, գիտական տարեգրքեր եւ նման բնույթի այլ աշխատանքներ: Նրա հրատարակությունների թվում է 1957թ. սկսված «Յադ Վաշեմի ուսումնասիրություններ» մատենաշարը, որի շրջանակներում առ այսօր լույս են տեսել 33 անգլերեն եւ եբրայերեն հատորներ: Յադ Վաշեմը մինչ օրս եբրայերենով եւ անգլերենով հրատարակել է ավելի քան 200 գրքեր, որոնք իսրայելական հասարակությունում կազմում են Հոլոքոստին նվիրված գրականության ողնաշարը:

Հոլոքոստի պատմության նոր թանգարանը, որ կառուցվում էր շուրջ տասը տարի եւ արժեցել է \$40 մլն, բացվել է 2005թ. մարտին եւ զբաղեցնում է ավելի քան 4200 քառ. մ գերազանցապես ստորգետնյա տարածք: Այստեղ ներկայացված է Շոայի պատմության իսրայելական մեկնաբանումը: Նկատենք, որ մինչեւ 12 տարեկան երեխաների մուտքը թանգարանի տարածք արգելված է:

Արվեստի թանգարանը ներառում է Հոլոքոստի աննկարագրելի անբարենպաստ պայմաններում, ինչպես նաև պատերազմից հետո վերապրողների եւ արվեստագետների կողմից ստեղծված գեղարվեստական իրերի, նկարների ընտրանու հավաքածու:

Հիշողության սրահը վրանաձեւ կառույց է, որը հնարավորություն է

ընձեռում այցելուներին իրենց հարգանքի տուրքը մատուցել նահատակների հիշատակին: Հատակին փորագրված են Երկրորդ աշխարհամարտի տարիներին Եվրոպայով մեկ ցրված մահվան եւ համակենտրոնացման ճամբարների անունները: Հավերժական կրակի առջեւ գտնվում է զոհերի աճյուններ պարունակող դամբարանը: Պաշտոնական անձանց այցելությունների ժամանակ այստեղ են կատարվում հուշային արարողությունները:

Երեխաների հուշահամալիրը հարգանքի տուրք է Հոլոքոստի տարիներին սպանված մոտ 1,5 մլն երեխաների հիշատակին: Այստեղ երկար միջանցքի հայելապատ պատերին արտացոլվում է երեխաների հիշատակին վառվող հազարավոր մոմերի լույսը, իսկ խորքում հնչում է երաժշտություն, եւ բարձրաձայն թվարկվում են զոհված երեխաների անունները: Համայնքների հովիտը 1 հա տարածք զբաղեցնող հուշարձան է, որը փորված է բնական ժայռի մեջ: Այստեղ զանգվածեղ քարե պատերին փորագրված են ավելի քան 5 հազ. ոչնչացված եւ մի քանի մեծապես տառապած, սակայն կենդանի մնացած իրեական համայնքների անուններ:

Ազգերի միջից առաքինի անհատների ծառուղին եւ պարտեզը ստեղծված են ի պատիվ այն ոչ իրեա մարդկանց, որոնք, առաջնորդվելով մարդասիրության սկզբունքներով, իրենց կյանքը վտանգի ենթարկելով օգնել են իրեաներին Հոլոքոստի ժամանակ: Ծառուղու մեջ եւ եզրերին տնկված են 2000 ծառեր, որոնք խորհրդանշում են նոր կյանքի վերածնունդը: Ամեն ծառին կից հուշատախտակները ներկայացնում են իրեաների կողմից մշտապես հիշվելու պատվին արժանացած մարդկանց անուններն ու պատերազմի տարիներին նրանց բնակության երկրները: Առ այսօր ավելի քան 18000 ոչ իրեաներ են Յադ Վաշենի կողմից ճանաչված որպես Ազգերի միջից առաքինի անհատներ, եւ նրանց բոլորի անունները՝ ըստ բնակության երկրների, փորագրված են պարտեզի պատերին: Նման անհատների որոշման գործընթացը՝ հատուկ հանձնաժողովի ուժերով, սկսվել է 1963թ. եւ շարունակվում է մինչ օրս: Հրատարակվում է Ազգերի միջից առաքինի մարդկանց հանրագիտարան: Մասնավորապես, ֆրանսերենով եւ անգլերենով հրատարակվել են հատորներ՝ նվիրված պատերազմի տարիներին Ֆրանսիայում իրեաներին օգնած մարդկանց, գերմաներենով՝ հատորներ, նվիրված այդ տիպի մարդկանց Գերմանիայում եւ Ավստրիայում: Երեք առանձին հատորներով անգլերեն լեզվով պատրաստ են հրատարակության աշխատանքներ Նիդեռլանդներում, Լեհաստանում եւ Բելգիայում իրեաներին օժանդակած մարդկանց մասին: Շուտով կիրատարակվեն

նմանատիպ գրքեր Չունաստանում եւ Իտալիայում պատերազմի տարիներին հրեաներին փրկած մարդկանց մասին:

Բռնագաղթվածներին նվիրված հուշահամալիրը անասուններ տեղափոխելու համար նախատեսված մեքենա է, որի նմաններով հազարավոր հրեաների տեղափոխում էին մահվան ճամբարներ: Այն տեղակայված է Երուսաղեմի անտառին նայող անդունդի եզրին եւ մարմնավորում է ինչպես վերահաս սոսկում, նույնպես եւ Չոլոքոստին հաջորդող վերածնունդ:

Յադ Վաշենում տեղ են գտնում նաեւ ամենամյա երկու ավանդական հուշային արարողություններ: Դրանցից մեկը Չոլոքոստի նահատակների եւ հերոսների հիշատակի օրն է: Այդպիսի օրվա սահմանման մասին որոշումն ընդունվել է 1953թ., Իսրայելի կնեսետի կողմից եւ Չոլոքոստի հիշատակի օր է սահմանում հրեական Նիսան ամսվա 27-րդ օրը, որը սովորաբար համընկնում է ապրիլի վերջին կամ մայիսի սկզբին: Յադ Վաշենում այն նշվում է հանդիսավոր պետական արարողությամբ, Վարշավայի գետտոյի հրապարակում, բազմաթիվ բարձրաստիճան պաշտոնյաների, այդ թվում եւ Իսրայելի նախագահի եւ վարչապետի մասնակցությամբ: Չաջորդ առավոտյան նույն հրապարակում տեղի է ունենում ծաղկեպսակների դրման արարողությունը, որին հաջորդում է հատուկ ոգեկոչման ծես Չիշատակի սրահում: Այստեղ հասարակությունը հրավիրված է լինում ընթերցելու հրեական Չոլոքոստի զոհերի անունները: Նացիստական Գերմանիայի դեմ հակահիտլերյան դաշնության հաղթանակի օրը պետականորեն նշվում է մայիսի 8-9-ին Յադ Վաշենի Չրեա զինվորների հուշահամալիրում:

**«ՄԵԾ ՈՒԹՆՅԱԿԻ» ՀԱՆԴԻՊՈՒՄԸ.  
ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
Դավիթ Հովհաննիսյան**

Հունիսի 6-8-ը գերմանական ամառանոցային Հայլիգենդամ քաղաքում կանցլեր Անգելա Մերկելն ընդունել էր աշխարհի 8 ամենահարուստ եւ զարգացած պետությունների ղեկավարներին: Գերմանիայի ղեկավարի համար այս հանդիպումը չափազանց կարեւոր նշանակություն ուներ, քանի որ նա պետք է ապացուցեր իր հայրենակիցներին, որ սկզբունքային կերպով հետամուտ է լինում իր նախընտրական ծրագրում կարեւոր տեղ զբաղեցնող հարցերի լուծմանը: Դրանցից հիմնականը վերաբերում էր շրջակա միջավայրի պահպանման միջազգային ծրագրերի ստեղծմանը եւ համաշխարհային մթնոլորտն աղտոտելու հանցանքում ամենամեծ լուծման ունեցող Միացյալ Նահանգների վրա ճնշում գործադրելուն, որպեսզի վերջինս վերանայի իր դիրքորոշումն այս հարցում:

Բացի այդ, տիկին Մերկելի համար մեծ նշանակություն ուներ այն, որ իր երկիրն առաջնորդող դեր է կատարում աղետալի վիճակում գտնվող աֆրիկյան մայրցամաքի բնակչությանն անհապաղ օգնություն կազմակերպելու հարցում: «Ութնյակի» կողմից (նաեւ «վեցնյակ» եւ «յոթնյակ» ձեւաչափերում) բազմիցս խոստումներ են տրվել «սեւ» մայրցամաքին կազմակերպված եւ մշտական օգնություն տրամադրելու վերաբերյալ, սակայն տարբեր պատճառներով այդ ծրագրերի միայն չնչին մասն է իրականացվել:

Կարելի է ասել՝ Գերմանիայի ներկայիս ղեկավարի համար շատ կարեւոր էր նաեւ հրապարակայնորեն ցույց տալ, որ նախկին վեճերը Միացյալ Նահանգների հետ կորցրել են իրենց սրությունն այն պատճառով, որ Գերմանիան եւ Միացյալ Նահանգներն այսօր նույն կարգավիճակի մեջ գտնվելով՝ քննարկում են, օրինակ, Իրանի միջուկային ծրագրի հետ կապված հիմնախնդիրը եւ միասին որոշումներ ընդունում այս հարցի վերաբերյալ:

Հավանաբար, տան տիրուհու այս նպատակամղված դիրքորոշման հետեւանքով հերթական հանդիպումը կարելի է գնահատել որպես շատ գործնական եւ ժամանակի խնդիրներին համահունչ: Դրանով այն տարբերվեց նախորդներից, որոնք ավելի շուտ միտված էին լինում

հորիզոնում դեռ հազիվ նշմարվող նոր երեւոյթների եւ թեական սպառնալիքների շուրջ կարծիքների փոխանակմանը:

«Ութնյակի» նախորդ հանդիպումից հետո անցած ժամանակաշրջանը հատկանշական էր Ռուսաստան—ԱՄՆ եւ Ռուսաստան—ԵՄ հարաբերությունների աճող լարվածությամբ: Այդ ակնհայտորեն դրսևորվող միտման հիմքում մի քանի հիմնական պատճառներ կան:

Առաջինը կապված է Մոսկվայի նավթագազային քաղաքականության հետ, որի էական բաղադրյալները թույլ են տալիս թե՛ «հին Եվրոպայի» եւ թե՛ «նոր Եվրոպայի» երկրների ղեկավարներին մեղադրել ռուսներին «էներգետիկ շանտաժի» համար: Երկու կողմերին բավարարող պայմանավորվածությունների հասնելու բոլոր փորձերը, իսկ դրանցից վերջինն արվեց անմիջապես «ութնյակի» գագաթաժողովի նախօրեին Սամարայում կայացած Ռուսաստան—Եվրամիություն հանդիպման ընթացքում, տապալվեցին, ինչը, բնականաբար, չէր նպաստում Յայլիզենդամում համերաշխ մթնոլորտի նախապատրաստմանը:

Զափազանց սկզբունքային եւ միեւնույն ժամանակ՝ զգացմունքային բնույթ ունի Կոսովոյի անկախության հիմնախնդիրը: Այս հարցի վերաբերյալ Ռուսաստանի դիրքորոշումը հասկանալի պատճառներով կտրուկ կերպով տարբերվում էր ԱՄՆ-ի եւ Եվրոպական երկրների դիրքորոշումներից: Ռուսական լրատվամիջոցներում բազմիցս հրապարակվել է իշխանամետ դիրքորոշում ունեցող փորձագետների կարծիքն այն մասին, որ եթե Արեւմուտքի կողմից Կոսովոյին անկախություն տրվի, ապա Ռուսաստանն անմիջապես կճանաչի Յարավային Օսիայի եւ Աբխազիայի անկախությունը, ինչը չափազանց ծանր վիճակի մեջ կդնի ԱՄՆ դաշնակից Վրաստանին եւ աննախադեպ լարվածություն կառաջացնի ռուս-վրացական սահմանի վրա՝ ապակայունացնելով ողջ տարածաշրջանը: Երկու կողմերի՝ այս հարցում ունեցած մոտեցումների անհամատեղելիությունը, այսպիսով, ակնհայտ էր:

Ուշագրավ է շահերի բախման հաջորդ կետը, որը կապված է Միացյալ Նահանգների՝ Չեխիայում եւ Լեհաստանում հակահրթիռային կայաններ տեղադրելու ծրագրերի հետ, ինչը, համաձայն ռուսաստանյան բարձրագույն ղեկավարության հայտարարությունների, նրանց կողմից գնահատվում է որպես իրենց երկրի դեմ ուղղված քայլ եւ անմիջական սպառնալիք:

Երկրորդ է, թե՛ արեւմտյան եւ թե՛ ռուսական մի շարք վերլուծաբաններ փորձում են ապացուցել<sup>1</sup>, որ Եվրոպական այդ երկրներում տեղադրվելիք հրթիռները չեն կարող գնահատվել որպես սպառնալիք



Ռուսաստանի համար, այնուամենայնիվ, ՌԴ նախագահ Վ.Պուտինը եւ Կրեմլի այլ ներկայացուցիչներ չափազանց կարծր դիրքորոշում են որդեգրել այս խնդրի վերաբերյալ՝ փաստարկելով, որ հակահրթիռային կայանների տեղադրումը Ռուսաստանի սահմանների մատույցներում սկիզբ է դնում նոր բաժանարար գոտիների ստեղծմանը եւ այսպիսով ստեղծում պայթյունավտանգ գոտիներ, ինչը կարող է հանգեցնել նոր սառը պատերազմի:

Այն հարցերի շրջանակը, որոնց վերաբերյալ կողմերի միջեւ համաձայնություն չկա, չի սահմանափակվում միայն այս երեք հիմնախնդիրներով, սակայն, առաջին հերթին, դրանք են այսօր դրված բանակցությունների սեղանին, ուստի հենց այս կետերի վերաբերյալ ռուսաստանյան ղեկավարությունը պետք է մշակեր այնպիսի դիվանագիտական քայլեր, որոնք թույլ կտային նվազեցնել անցանկալի լարվածության աստիճանը:

Կոստվոյի հարցի քննարկումները, դատելով մամուլի հրապարակումներից եւ բանակցությունների մասնակիցների հայտարարություններից, անցել են բավական լարված մթնոլորտում: Ամենայն հավանականությամբ, Ռուսաստանը կզիջի այս խնդրում՝ պահանջելով (հեղինակությունը սերբերի եւ մյուս բոլորի մոտ վերջնականապես չկորցնելու համար), որպեսզի արագացվի Սերբիային ԵՄ ընդունելու բանակցային գործընթացը, որը վերսկսելու վերաբերյալ որոշում արդեն կայացվել է<sup>2</sup>:

Ինչ վերաբերում է Եվրոպայում տեղակայվելիք հակահրթիռային կայանների հարցին, ապա ռուսական ղեկավարությունը հետաքրքիր դիվանագիտական քայլ էր նախապատրաստել: Վ.Պուտինն առաջարկեց Միացյալ Նահանգների նախագահին համատեղ շահագործել Ադրբեջանի սեփականություն հանդիսացող եւ Ռուսաստանի կողմից վարձակալվող Գաբալայի ռադիոտեղորոշիչ կայանը, որը ծածկում է ամբողջ Միջին Արեւելքը, Եվրոպայի մի մասը, իսկ կատարելագործումից հետո կարող է ապահովել նաեւ ամբողջ Եվրոպայի տարածքի հսկումը:

Չետաքրքիր են ամերիկյան պաշտոնական եւ ոչ պաշտոնական մեկնաբանությունները Ռուսաստանի այս առաջարկի կապակցությամբ: Դրանք հստակորեն բաժանվում են երկու խմբի, ընդ որում՝ ռազմական մասնագետներն այն լուրջ չեն համարում, քանի որ Գաբալայի կայանը շատ մոտ է տեղակայված Իրանին, որն, իրենց տեսակետից, վտանգ է ներկայացնում Եվրոպայի համար: Վարչակազմի մյուս ներկայացուցիչները դրական են գնահատում այն, քանի որ, ինչպես նշել է, օրինակ,

Սպիտակ տան ազգային անվտանգության գծով խորհրդակցական Սթիվեն Յեդլին, «մենք դիմեցինք Ռուսաստանին, որպեսզի այն մեզ հետ համագործակցի հակահրթիռային պաշտպանության ոլորտում, եւ Ռուսաստանը ցուցադրեց իր բարի կամքը»:

Այլ կարծիքներ են արտահայտում գիտնականներն ու փորձագետները: Նրանք գտնում են, որ շատ ավելի կարելոր է հասկանալ, թե ինչ նպատակ էր հետապնդում Պուտինն այս առաջարկը ներկայացնելիս:

Ընդհանուր պատկերացումն այն է, որ Պուտինի այս առաջարկով երկու նախագահները, փոխադարձ համաձայնությամբ, կհետաձգեն հակահրթիռային կայանների տեղադրման հետ կապված հարցերը՝ մինչեւ իրենց նախագահական ժամկետների ավարտը: Սպիտակ տան տեր դառնալու հավակնող դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչներն արդեն իսկ ներկայացրել են հակահրթիռային անվտանգության հետ կապված մի քանի ծրագրեր, որոնք ենթադրում են նոր խարիսխների կառուցում եւ նոր ստորաբաժանումների ստեղծում ցամաքում եւ ծովում: Նման գաղափարներ կան նաեւ հանրապետական մի քանի թեկնածուների թղթապանակներում:

Երկրորդ գնահատականն այն է, որ Վ.Պուտինը լուծեց իր համար խիստ արդիական խնդիր. նա ապահովեց լարվածության նվազեցում առանց իրական զիջումների, ընդ որում՝ դա արվեց գերազանց PR-ային պայմաններում:

Երրորդ՝ արեւմտյան մասնագետների կարծիքով, Ռուսաստանն այս առաջարկությամբ փորձում է ռազմավարական ոլորտի հետ կապված հարցերում ձայնի իրավունք ստանալ:

Կան նաեւ հարցեր, որոնք, ըստ նրանց կարծիքի, պետք է ճշտվեն.

ա) որքանով է ռազմական տեսակետից արդարացված Ադրբեջանում տեղակայված կայանի համատեղ շահագործումը,

բ) արդյո՞ք Գաբալայի կայանի համատեղ շահագործման մասին առաջարկը նշանակում է, որ ՌԴ նախագահն այլեւս դեմ չէ Չեխիայում եւ Լեհաստանում տեղադրվելիք հրթիռներին այն պայմանով, որ դրանք իրականացվեն զուգահեռ, թե՞ նրա առաջարկը նախատեսում է միայն Գաբալայի կայանի օգտագործումը,

գ) արդյո՞ք դա փորձ է սեպ խրել Եվրոպայի եւ ԱՄՆ-ի միջեւ,

դ) գուցե այս առաջարկն արվել է միայն մի նպատակով՝ ավելի հանգիստ տոնայնության մեջ բանակցել ամերիկյան վարչակազմի հետ, հատկապես այն պայմաններում, երբ հայտնի է, որ Բուշը չի ուզում մեղադրվել «Ռուսաստանը կորցնելու» համար:

Հարկ է նշել, որ ռուսական դիվանագիտության այս քայլը, ինչ

մեկնաբանությունների եւ գնահատականների էլ որ արժանանա, փայլուն էր եւ երկուստեք նոր խաղի հնարավորություններ է տալիս: Եվ Հայլիգենհայմի հանդիպումն, անշուշտ, կարելուովեց նաեւ այս դիվանագիտական մաներներով:

Ինչ վերաբերում է քննարկվող մյուս հարցերին, ապա պետք է նշել, որ տիկին Մերկելը տարավ կարելու հաղթանակ: Նրա ջանքերի եւ բերված փաստարկների շնորհիվ<sup>3</sup> Ջ.Բուշը, որը սկզբում կտրակա-նապես հրաժարվում էր քննարկել Միացյալ Նահանգների կողմից մթնոլորտն աղտոտող նյութերի կրճատման հարցը, ի վերջո ստորագրեց մի փաստաթուղթ, համաձայն որի՝ ԱՄՆ-ը պարտավորվեց մինչև 2050թ. կրճատել այդ քանակը 50 տոկոսով, ինչն աննախադեպ է եւ բանակ-ցություններից առաջ գնահատվում էր որպես ցանկալի, բայց գրեթե անհնարին արդյունք:

Բացի այդ, որոշվեց 60 մլրդ ԱՄՆ դոլար տրամադրել աֆրիկյան մայրցամաքում իրավիճակը շտկելու նպատակով, որի համար նախա-տեսվում է հատուկ կառավարման եւ հսկման համակարգեր ստեղծել:

Եվս մեկ անգամ հաստատվեց միասնական կոշտ դիրքորոշումը Իրանի միջուկային ծրագրերի իրականացման վերաբերյալ:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ «ութնյակի» հերթական հանդիպումն իր նշանակությամբ առանձնանում է այս ձեւաչափի մյուս հանդիպումներից: Այն դարձավ իրոք կարելու խնդիրների քննարկման հարթակ, եւ բանակցությունների արդյունքում ընդունված եզրափակիչ փաստաթղթերը կարող են ունենալ չափազանց կարելու նշանակու-թյուն մոլորակի հետագա զարգացման համար:

<sup>1</sup> Օրինակ՝ ռուսական «Կոմերսանտ» հեղինակավոր թերթը նշում է, որ համաձայն Միացյալ Նահանգների նախագահ Ջ.Բուշի, այն հակահրթիռային համակարգը, որը պետք է տեղադրվի Եվրոպայում, վտանգավոր չէ Ռու-սաստանի համար: Նրա գլխավոր փաստարկն այն է, որ Լեհաստանում տեղադրվող որսացող հրթիռները մեկ միջամաքային հրթիռից ավելի չեն կարող վնասագերծել, այն դեպքում, երբ Ռուսաստանն ունի միջուկային հրթիռների հսկայական զինանոց, որն այդ համակարգն ուղղակի ի վիճակի չէ որսալ:

<sup>2</sup> ԱՄՆ Արտաքին հարաբերությունների խորհրդի եվրոպական հարցերով փորձագետ, հայտնի վերլուծաբան Չարլզ Կապչանը այսպես է գնահատում Ռուսաստանի շահերը Կոսովոյի հարցի վերաբերյալ. «Իրականում ես կարծում եմ, որ Ռուսաստանն առանձնապես անհանգստացած չէ Կոսովոյի վերաբերյալ: Այն գաղափարը, որ գոյություն ունի ինչ-որ միասնական Սլավոնական աշխարհ եւ որ սերբերը կիսում են ուղղափառության նկատմամբ Ռուսաստանի ունեցած պարտավորությունները, այլևս չկան պահոցում: Եվ եթե դուք հարցնեք՝ լավ, իսկ ո՞րն է Ռուսաստանի ձեռք բերելիքը Կոսովոյում, պատասխանը կլինի՝ առանձնապես ոչինչ: Ռուսաստանն առետուր չունի Կոսովոյի հետ, Կոսովոյում նավթ չկա, Ռուսաստանն այնտեղ ատոմակայան չի կառուցում»: Չ.Կապչանը բացատրում է Վ.Պուտինի կոշտ դիրքորոշումը երկու հիմնական հանգամանքներով, նախ՝ էթնիկական սկզբունքով անկախության ձեռքբերումը վտանգավոր է Ռուսաստանի համար որպես նախադեպ, եւ ապա՝ Պուտինը միշտ ձգտում է «Արեւմուտքի առջեւ իր մկանները խաղացնել», որպեսզի ամերիկացիների եւ եվրոպացիների համար պարզ լինի, որ նրանք պետք է հաշվի նստեն Ռուսաստանի շահերի եւ դիրքորոշման հետ:

<sup>3</sup> Հիշեցնենք, որ իբրեւ գիտնական տիկին Մերկելը երկար տարիներ զբաղվել է մթնոլորտի աղտոտման հիմնահարցերով:

## **ՄԵՐՁՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ**

### ***Սարգիս Հարությունյան***

2007թ. մայիսի 28-ին Բաղդադում տեղի ունեցած բանակցություններ Իրաքում ԱՄՆ դեսպան Ռայան Քրոկերի եւ նույն երկրում Իրանի դեսպան Հոսեյն Քազեմիի միջեւ: Թեեւ հաղորդագրությունների համաձայն՝ բանակցությունների հիմնական թեման առնչվում էր միայն իրաքյան խնդրին, սակայն քիչ հավանական է, որ շուրջ 27 տարի դիվանագիտական նման կարգի շփումներ չունեցած եւ տարածաշրջանում ազդեցությամբ առանձնացող երկու տերությունները սահմանափակվեին սոսկ մեկ երկրին առնչվող օրակարգով:

Մյուս կողմից, հաշվի առնելով 2003-ից ի վեր Մերձավոր Արեւելքում ստեղծված իրադրությունն ու ընթացող զարգացումները՝ ամերիկա-իրանական նման կարգի բանակցություններն արդեն իսկ պետք է ընկալել որպես տարածաշրջանային որոշակի հարցերի շուրջ նախնական պայմանավորվածությունների ձեռքբերման արդյունք:

Հիմնական հարցը, որը կարող է ի հայտ գալ նման պայմաններում, տարածաշրջանում ստեղծվող նոր իրավիճակի կառուցվածքին առնչվող հարցն է, քանզի ակնհայտ է դառնում, որ, անկախ արդյունքից, նման բանակցությունների մեկնարկն ինքնին նշանակում է նոր իրավիճակի առաջացում ողջ Մերձավոր Արեւելքում:

Որպես տարածաշրջանում իրավիճակի ձեւափոխման ցուցիչ է առանձնացվել նոր պայմանավորվածություններին միտված դիվանագիտական նախաձեռնությունների շարքը Մերձավոր Արեւելքում:

### **Մերձավորարեւելյան դիվանագիտություն**

Իրավիճակի տեղաշարժի առաջին լուրջ նշաններն ի հայտ եկան 2006թ. վերջից—2007թ. սկզբից՝ սաուդյան տարածաշրջանային քաղաքականության համար միզուցե անսովոր դիվանագիտական ակտիվ նախաձեռնություններով:

Թեեւ Լիբանանը համարվել է տարածաշրջանում սաուդական թագավորական տան ազդեցության ընդլայնման ավանդական գոտի եւ այդ առումով էր Ռիադի ջանքերն առանձնացել էին հատկապես վերջին մեկուկես տասնամյակում<sup>1</sup>, սակայն 2006թ. իսրայելա-լիբանանյան

պատերազմից հետո Բեյրութի ուղղությամբ իրականացվող սաուդյան քաղաքականությունն<sup>2</sup> արդեն դուրս էր գուտ ներլիբանանյան տրամաբանությունից:

Տարածաշրջանում էր Ռիադի դիվանագիտական ակտիվության կարելուր երկրորդ ուղղությունը դրսևորվեց պաղեստինյան հարցում:

2006թ. հունվարի 25-ին Պաղեստինյան ինքնավարությունում կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքում իշխանության գլուխ եկած «Համաս» շարժման գործունը կարճ ժամանակ անց իր արտացոլունը գտավ տարածաշրջանային քաղաքականության մեջ: Եվ այդ առումով 2006-ից շարունակվող «Ֆաթհ»-«Համաս» հակամարտությունը նախեսառաջ ենթարկվում է մերձավորարևելյան քաղաքականության տրամաբանությանը:

Այս տարվա փետրվարի 8-ին Սաուդյան Արաբիայի թագավոր Աբդալլահի անմիջական նախաձեռնությամբ Մեքքայում պաղեստինյան միացյալ կառավարության ստեղծման մասին համաձայնագիր կնքվեց ինքնավարության նախագահ, «Ֆաթհ» շարժման ղեկավար Մահմուդ Աբասի եւ «Համասի» ներկայացուցիչներ՝ ինքնավարության վարչապետ Իսմայիլ Հանիայի ու կազմակերպության քաղխորհրդի նախագահ Խալեդ Մաշալի միջեւ: Ենթադրվում էր, որ սաուդյան նշված քայլը, թերեւս, աջակցություն էր ստացել նաեւ Դամասկոսում, քանզի Մաշալը, ով ապաստան է գտել Սիրիայում, համարվում է վերջինիս մարդը «Համասում»: Նշվածը հատկապես առանձնանում էր այն պատճառով, որ համաձայնագրի անուղղակի արդյունքը պետք է լիներ պաղեստինյան գործերում Իրանի ազդեցության սահմանափակումը:

Ս.թ. հունիսի 13-15-ի իրադարձությունները Գազայի հատվածում, երբ «Համաս» շարժման զորամիավորումները գրավեցին կառավարական բոլոր շենքերը, ինքնավարության նախագահ Մահմուդ Աբասը ցրեց կառավարությունը՝ նշանակելով նոր վարչապետ (Սալյամ Ֆայադ), իսկ «Համասի» գլխավորած կառավարությունն էլ՝ Իսմայիլ Հանիայի գլխավորությամբ, հրաժարվեց ենթարկվել Աբասի հրամանագրին, վկայում են, որ պաղեստինյան ուղղությամբ սաուդական դիվանագիտությունը տապալվել է: Անշուշտ, նշվածը կարող է խոսել իրանական զօի հաջողության օգտին, սակայն նաեւ պետք է որ ձեռնտու համարվի իսրայելական կողմի<sup>3</sup> եւ անհաջողություն՝ Մերձավոր Արեւելքում ամերիկյան քաղաքականության համար:

Եվ վերջապես, սաուդական նախաձեռնություններում, անշուշտ, պետք է առանձնացնել Սիրիայի արաբական մեկուսացման դեմ ուղղված քայլը եւ Իսրայելին, փաստորեն, ողջ արաբական աշխարհի

կողմից արված հաշտության առաջարկը: Ըստ ամենայնի, այդ նախա-  
ձեռնությունները հանդես են եկել փոխկապակցված ձեռով, եւ այդ  
առումով ամենեւին էլ պատահական չէ, որ երկուսն էլ ի հայտ եկան ս.թ.  
մարտի 28-29-ը էր Ռիադում կայացած Արաբական պետությունների  
լիգայի 19-րդ գագաթաժողովի ժամանակ: Գագաթաժողովին սաուդյան  
թագավորը կրկնեց դեռեւս 2002թ. հրեական պետությանն իր իսկ արած  
հաշտության առաջարկը<sup>4</sup>, եւ դա արվեց սաուդա-սիրիական հարա-  
բերություններում, փաստորեն, տեղի ունեցած «ճեղքման» ֆոնին:

Ըստ էության, սիրիական հարցն, ընդհանրապես, հանդես է գալիս  
որպես մերձավորարեւելյան նոր զարգացումների եթե ոչ ամենա-  
առանցքային, ապա ամենակարեւոր գործոններից մեկի տեսքով:  
Իրանա-սիրիական եւ սաուդա-սիրիական հարաբերություններում  
նկատվող զարգացումներից գատ, այդ հետեւության օգտին են խոսում  
հատկապես իսրայելա-սիրիական եւ ամերիկա-սիրիական հարաբերու-  
թյուններում ի հայտ եկած նոր տարրերը:

2007թ. հունվարի 16-ին իսրայելական «Haaretz» պարբերականը  
գրեց, թե 2004թ. սեպտեմբերից ի վեր Թել Ավիվն ու Դամասկոսը  
գաղտնի բանակցություններ են վարում հաշտության պայմանագիր  
կնքելու նպատակով, իսկ արդեն մայիսի 24-ին իսրայելական մեկ այլ  
օրաթերթի՝ «Maariv»-ի հրապարակման համաձայն, օտարերկրյա մի  
քանի դիվանագետներ ներկայումս զբաղված են Իսրայելի վարչապետ  
Էհուդ Օլմերթի եւ Սիրիայի նախագահ Բաշար Ասադի միջեւ,  
փաստորեն, բանակցությունների ընդհանուր օրակարգ մշակելով:

Քիչ հավանական է, որ պատահականություն լինի այն հանգա-  
մանքը, թե իսրայելա-սիրիական բանակցությունների վերաբերյալ  
տեղեկատվական արտահոսքերն, ընդհանուր առմամբ, համընկան  
ամերիկա-սիրիական հարաբերություններում նկատվող ջերմացման  
հետ: Դեռեւս ս.թ. ապրիլի 3-4-ը ԱՄՆ Ներկայացուցիչների տան խոսնակ  
Նենսի Փելոսիի Դամասկոս կատարած այցելության առնչությամբ  
կարծիք էր հայտնվել, թե այդ քայլը վկայում է Սիրիայի նկատմամբ  
Վաշինգտոնի նոր քաղաքականության մասին: Ենթադրությունն  
ապացուցվեց մայիսի 3-4-ը եգիպտական Շարմ աշ-Շեյխ հանգստա-  
վայրում տեղի ունեցած Իրաքի վերաբերյալ միջազգային համաժողովի  
շրջանակներում ԱՄՆ ու Սիրիայի արտգործնախարարներ Քոնդոլիզա  
Ռայսի ու Վալիդ Մուալեմի միջեւ կայացած հանդիպմամբ: Լրատվական  
արտահոսքերի համաձայն՝ ամերիկա-սիրիական բանակցությունների  
օրակարգի գլխավոր թեմաներն են Արեւմուտքի կողմից Բաշար Ասադի  
վարչակարգին տրվող ապահովության երաշխիքները, իսկ փոխարենը

Դամասկոսից պահանջվում է կայունացնող մոտեցում ցուցաբերել Լիբանանի ու Իրաքի գործերում:

Կասկածից վեր է, որ իսրայելա-սիրիական բանակցություններում տեղ գտած ակտիվությունն առաջին հերթին Դամասկոսի նկատմամբ ամերիկյան նոր մոտեցման արդյունք է:

Մերձավորարեւելյան նոր դիվանագիտության հաջորդ կարելուր տարրը Եվրամիության ու Իրանի միջեւ վերսկսված բանակցություններն են: Այդ բանակցությունները, որոնք իրանական միջուկային զարգացումների համատեքստում Միացյալ Նահանգների ու Իրանի կողմից միշտ էլ դիտարկվել են որպես անուղղակի շփման միջոց, վերջին անգամ ընթացել էին 2007թ. փետրվարի 10-11-ը Մյունխենում կայացած անվտանգության հարցերով միջազգային համաժողովի շրջանակներում:

Եվրոպա-իրանական վերսկսված բանակցությունները մինչ օրս ընթացել են երկու փուլով՝ ապրիլի 25-26-ը Անկարայում եւ մայիսի 31-ին Մադրիդի մոտ՝ Եվրամիության արտաքին ու անվտանգության քաղաքականության հարցերով հանձնակատար Խավիեր Սոլանայի ու Իրանի ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի քարտուղար Ալի Լարիջանիի միջեւ:

Բանակցությունների վերսկսման փաստն ուշագրավ էր հատկապես այն հանգամանքով, որ ապրիլի վերջին—մայիսի սկզբին վերջնականապես պարզվեց, թե Իրանը մտադիր չէ կատարել 2007թ. մարտի 24-ին ՄԱԿ Անվտանգության խորհրդի կողմից ընդունված բանաձեւի պահանջները:

Եվ վերջապես, մերձավորարեւելյան զարգացումների համատեքստում պետք է առանձնացնել ԱՄՆ-ի ու Իրանի միջեւ սկսված բանակցությունները, որոնք, ինչպես նշվեց, տեղի ունեցան մայիսի 28-ին Բաղդադում: Հատկապես 2003թ. իրաքյան պատերազմից հետո տարածաշրջանում ստեղծված իրավիճակի ֆոնին Իրանի հետ բանակցությունների գնալը Վաշինգտոնում միշտ էլ դիտարկվել է որպես Թեհրանին զիջման գնալուն հավասար մի քայլ: Եվ այդ առումով անգամ 2006թ. դեկտեմբերի 6-ին հրապարակված Բեյքեր—Համիլթոն խմբի («Iraq Study Group») հանձնարարականները՝ բանակցությունների գնալ Իրանի ու Սիրիայի հետ, իրականացման տեսանկյունից 2007թ. սկզբին դիտվում էին որպես քիչ հավանական: Հետեւաբար, երբ ս.թ. ապրիլի 25-ին ամերիկյան հանրային PBS հեռուստաալիքով Բուշ-կրտսերը հայտարարեց, թե Քոնդոլիզա Ռայսին թույլատրվել է բանակցություններ սկսել Թեհրանի հետ, սակայն միայն իրաքյան հարցով, պարզ դարձավ,



որ բացվել է ողջ Մերձավոր Արեւելքի առնչությամբ պայմանավորվածություններ ձեռք բերելու ամերիկա-իրանական օրակարգը:

Հատկանշական է, որ Իրանի հետ բանակցությունների գնալու գործընթացին ամերիկացիները ձեռնամուխ եղան իրենց դիվանագիտությանը բնորոշ եղանակով: Իրանական կողմի հետ նախ բանակցությունների մեջ մտավ Լոնդոնը. մայիսի 3-4-ը եգիպտական Շարմ աշ-Շեյխ հանգստավայրում կայացած համաժողովի ընթացքում բրիտանական արտգործնախարարության ղեկավար Մարգրեթ Բեքինթը մոտ կեսժամանոց հանդիպում ունեցավ Իրանի իր գործընկեր Մանուչեհր Մոթաքիի հետ<sup>5</sup>:

### **Չետելություններ**

Մերձավոր Արեւելքը մուտք է գործում, թերեւս, կարճաժամկետ տեւողությամբ մի նոր իրավիճակ, որի հիմնական բնութագրիչներն են.

- ❖ ԱՄՆ իրաքյան կանպանիայի ձախողման հետեւանքները,
- ❖ իրանական ազդեցության աճը տարածաշրջանում,
- ❖ սառը պատերազմի ավարտից հետո տարածաշրջանում ձեւավորված ուժերի փոխդասավորվածության ու հաշվարկների տրանսֆորմացիան:

Սկզբունքային նորությունն այն է, որ, ամենայն հավանականությամբ, Վաշինգտոնում որոշում է կայացվել 2007—2008թթ. ընթացքում բացառել Իրանի նկատմամբ ռազմուժի կիրառումը: Առնվազն այդ հետեւության օգտին են խոսում գլխավորապես ամերիկյան դիվանագիտության կողմից նախաձեռնված մերձավորարեւելյան վերոհիշյալ զարգացումները:

Հասկանալի է, որ ներկայացվածի առանցքն են հանդիսանում ամերիկա-իրանական հավանական պայմանավորվածությունները: Մերձավոր Արեւելքում ընթացող մյուս բոլոր գործընթացները հարկ է դիտարկել որպես այդ առանցքին միտված գործոններ:

Այդքանով հանդերձ, այս իրավիճակի տեւողությունն իրոք որ կարող է սահմանափակվել 2007—2008թթ.-ով՝ կապված այն հանգամանքի հետ, որ ամերիկյան քաղաքական էլիտան դուրս կգա նախընտրական իրավիճակից, եւ այդ դեպքում (չհաշված ընտրությունների արդյունքը) Վաշինգտոնի մերձավորարեւելյան քաղաքականության մեջ կարող է գործել այլ տրամաբանություն:

<sup>1</sup> Էր Ռիադի քաղաքականության հաջողությունն է համարվում սաուդյան թագավորական տան հետ սերտ կապեր ունեցող մեծահարուստ Ռաֆիկ Չարիրիի կողմից 1992—1998թթ. եւ 2000—2004թթ. Լիբանանյան կառավարությունը գլխավորելը: Հիշեցնենք, որ Ռ.Չարիրին սպանվեց 2005թ. փետրվարի 14-ին Բեյրութում տեղի ունեցած ահաբեկչական գործողության արդյունքում:

<sup>2</sup> Այդ քաղաքականության, թերեւս, ամենավառ օրինակներից էր Էր Ռիադի հովանավորությունը վայելող եւ արտաքին քաղաքականության մեջ գլխավորապես արեւմտյան կողմնորոշում ունեցող Ֆուադ աս-Սինյորայի կառավարությանը հատկացված մոտ \$1.1 մլրդ օգնությունը, որը տրամադրվեց 2007թ. հունվարի 25-ին Փարիզում կայացած եւ Լիբանանին նվիրված միջազգային համաժողովի արդյունքում: Օգնության չափի առումով սաուդցիների տրամադրածը զիջում էր միայն Ջարգացման ու վերակառուցման եվրոպական բանկի հատկացրած գումարին՝ \$1.25 մլրդ:

<sup>3</sup> Առաջին հերթին Վաշինգտոնի կողմից ճնշում է բանեցվում Թել Ավիվի վրա՝ բանակցային գործընթացում որոշակի զիջման գնալ պաղեստինյան կողմին: ԱՄՆ պատկերացմամբ՝ այդ հանգամանքը պետք է որ օժանդակի Միացյալ Նահանգների մերձավորարեւելյան ընթացիկ քաղաքականությանը:

<sup>4</sup> Խաղաղության եւ Իսրայելը ճանաչելու փոխարեն առաջարկվում է Գազայի շրջանում և Հորդանան գետի ողջ արեւմտյան ափում ստեղծել Պաղեստինյան պետություն՝ Արեւելյան Երուսաղեմ մայրաքաղաքով, իսկ Իսրայելի սահմանները պետք է համպատասխանեն մինչեւ 1967թ. պատերազմը եղած իրավիճակին:

<sup>5</sup> Չպետք է մոռանալ նաեւ, որ իրանա-բրիտանական նման կարգի բանակցություններն առաջինն էին իրանցիների կողմից ձերբակալված բրիտանացի 15 նավաստիների շուրջ ծավալված զարգացումներից (2007թ. մարտի 23–ապրիլի 4) հետո:

## **ԲԱՆԱԿԻ ԴԵՐԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ**

### ***Սուրեն Մանուկյան***

Թուրքիայում պետության նախագահի ընտրության հարցի շուրջ երկրի կառավարության եւ ռազմական վերնախավի բախումը եւս մեկ անգամ առիթ տվեց խոսելու Մերձավոր Արեւելքում բանակի հատուկ դերի եւ կարեւորության մասին:

Այս տարածաշրջանում բանակն ավելին է, քան ուղղակի ցանկացած պետության անօտարելի մաս հանդիսացող զինված ուժերը: Ի տարբերություն, օրինակ, Արեւմուտքի երկրների, որտեղ բանակը քաղաքացիական իշխանությունների ամբողջական վերահսկողության տակ է գտնվում եւ քաղաքական իշխանության աղբյուր չի հանդիսանում, Մերձավոր Արեւելքում բանակն ակտիվորեն մասնակցում է հասարակական կյանքի բոլոր գործընթացներին՝ ընդհուպ մինչեւ իշխանության ձեւավորումը:

Տարբեր են ոչ միայն բանակի կերպարը եւ ընկալումը հասարակությունում, այլ նաեւ գործառույթները:

### **Պետական շինարարությունից դեպի իշխանություն**

Մերձավորարեւելյան տարածաշրջանի պատմության ամբողջ ընթացքում բանակը ոչ միայն կայսրությունների եւ պետությունների ռազմական ուժի խորհրդանիշ էր, այլ նաեւ տնտեսական բարեկեցության (օրինակ, Օսմանյան կայսրության տնտեսությունը նույնիսկ նոր ժամանակներում հենվում էր բանակի իրականացրած հաջող արշավանքների վրա) եւ քաղաքական իշխանության կայունության հոմանիշ: Եվ եթե Եվրոպայում «գեներալների իշխանությունն» արդեն 18-19-րդ դդ. անշեղորեն փոխարինվում էր քաղաքացիական իշխանությամբ, եւ այս երկու ոլորտները տարանջատվում են, ապա Մերձավոր Արեւելքում եւ, ընդհանրապես, Առաջավոր Ասիայում բանակն ու քաղաքական իշխանությունները սերտաճած էին մնում:

Ավանդույթը շարունակվեց նաեւ 20-րդ դարում, երբ Օսմանյան կայսրության փլուզումից եւ մանդատային համակարգի լուծարումից հետո անկախություն հռչակած երկրներում պետական շինարարության գործընթացը գլխավորեց հենց բանակը՝ իբրեւ հասարակության ամենակազմակերպված եւ կայացած կառույց: Արդյունավետ քաղաքական

ինստիտուտների բացակայության պայմաններում այն օբյեկտիվորեն գերագույն լեգիտիմություն ձեռք բերեց եւ սկսեց իրականացնել իր սովորական գործառույթներից դուրս գտնվող միջոցառումներ՝ ընդհուպ մինչեւ տնտեսական եւ սոցիալական հարցերի կարգավորում: Բանակը սկսեց դիտարկվել իբրեւ երկրում կայունություն ապահովող ուժ եւ, հաճախ, նաեւ քաղաքական հակասությունների դեպքում՝ իբրեւ վճռորոշ դատավոր:

Այս արտոնյալ կարգավիճակը բավական խոր ազդեցություն թողեց մերձավորարեւելյան հասարակությունների հետագա զարգացման վրա: Հետագա տարիներին բանակը բազմաթիվ անգամներ խառնվեց տարածաշրջանի երկրների քաղաքական կյանքին: Նրա ազդեցության վերելքի ժամանակաշրջան կարելի է համարել 1950—1960-ական թթ., երբ Մերձավոր Արեւելքի պետություններում հիմնական հարցերը լուծվում էին անընդհատ իրականացվող ռազմական հեղաշրջումների եւ բանակի ճնշման միջոցով: Հետագայում քաղաքական իշխանությունները կարողացան որոշակիորեն ավելացնել սեփական կշիռը եւ հասարակական գործընթացների նկատմամբ սեփական վերահսկողության մակարդակը, սակայն, այնուամենայնիվ, բանակը պահպանում էր իր խիստ էական դերակատարությունը: Դրա մասին են վկայում, օրինակ, 1970—1980-ական թթ. տեղի ունեցած ռազմական հեղաշրջումներն Իրաքում եւ Թուրքիայում:

### **Չինվորականությունն իբրեւ հասարակական էլիտա**

Այս պարագայում բարձրաստիճան զինվորականությունը Մերձավոր Արեւելքի երկրներում սոցիալական շեշտակի վերելք ապրեց եւ դարձավ հասարակական վերնախավի կարեւորագույն մասը:

Նախ ձեւավորվեց զինվորականի կերպարի նկատմամբ խոր հարգանքի զգացում, որը սերմանվում է փոքր հասակից՝ կրթադաստիարակչական համակարգի միջոցով: Պետությունն իր հերթին սպաների համար սահմանեց բավական բարձր աշխատավարձեր եւ բազմաթիվ հատուկ առավելություններ՝ մաքսավճարներից ազատում, անվճար բուժսպասարկում եւ բնակարաններ, տրանսպորտային արտոնություններ: Նրանց տրամադրվեցին նաեւ տնտեսական եւ իրավական արտոնություններ ձեռնարկատիրական գործունեության բնագավառում: Արդյունքում՝ Մերձավոր Արեւելքի շատ երկրներում բարձրագույն զինվորականությունը կազմեց արտաքին առեւտրում մենաշնորհային դիրք ունեցող ձեռնարկատերերի մի հատուկ շերտ:

Բացի այն, որ զինվորականությունն անհատական ֆինանսական վիճակի բարելավման հնարավորություն էր ստանում, պետությունը նաեւ ապահովում էր բանակին ուղղվող հսկայական միջոցների ներհոսք: Ազգային բյուջեի զգալի մասը տրվում էր բանակին: Առանցքային արաբական երկրների բանակի ծախսերը կազմում են պետական բյուջեի մոտ մեկ երրորդը: Բանակը տնօրինում է պատկառելի սեփականություն, ինչպես նաեւ հսկայական միջոցներ են ծախսվում ժամանակակից զինատեսակներ ձեռք բերելու համար:

Բացի այդ, բանակի կողմից իշխանություններին նետվող մարտահրավերի բացառման համար՝ բարձրաստիճան զինվորականության համալրումը հաճախ իրականացվում է՝ հաշվի առնելով ոչ թե մասնագիտական հմտությունները, այլ իշխանություններին հավատարիմ լինելու հանգամանքը:

Այս ամենը շատ տրամաբանական է, քանի որ բոլոր ավտորիտար պետություններում իշխանությունները գիտակցում են, որ սոված եւ թույլ բանակը չի ցանկանա պաշտպանել գործող վարչակարգը, իսկ բանակի կորպորատիվ կարիքների եւ բարձրագույն զինվորական հրամանատարության անձնական հետաքրքրությունների բավարարումը ռազմական էլիտայի ներսում կստեղծի շահագրգռվածություն իշխող վարչակարգի պաշտպանության հանդեպ:

### **Դերի սահմանափակում**

Այս իրավիճակում բանակը՝ հասարակությունում իր ունեցած դրական կերպարով եւ մեծ ռեսուրսներով, իրական վտանգ է ներկայացնում քաղաքական վերնախավի համար: Այսօր բանակի արտոնյալ դերն անընդհատ ներքին եւ արտաքին մեծ ճնշումների պատճառ է դառնում:

Իշխանությունները բազմաթիվ մեթոդներով փորձում են ավելի վերահսկելի դարձնել բանակը եւ նրա ազդեցությունը որոշակիորեն սահմանափակել: Դա կատարվում է հիմնականում երկու ճանապարհով՝ հատուկ ծառայությունների թվի եւ ազդեցության բարձրացմամբ եւ զուգահեռ ռազմական կառույցների ստեղծմամբ:

Մի քանի հատուկ ծառայությունների առկայությունը (որոնց միջեւ մրցակցությունն իշխանությունների կողմից խրախուսվում է) հատկանշական է գրեթե բոլոր արաբական երկրներին: Հատուկ ծառայությունների ղեկավարներին (որոնք իշխող վերնախավի հետ հաճախ կապված էին լինում կրոնական, համայնքային, տեղայնական կամ բարեկա-

մական կապերով) ընդգրկելով կարելուրագույն քաղաքական հարցերի շուրջ որոշումներ ընդունողների շրջանակի մեջ՝ իշխանությունները հակակշիռ են ստեղծում զինվորականության ազդեցությանը եւ հեղինակությանը:

Մեկ այլ գործուն միջոց է զուգահեռ ռազմական ստորաբաժանումների ստեղծումը: Իրաքում դա Հանրապետական գվարդիան էր Սադամ Հուսեյնի օրոք, Սաուդյան Արաբիայում՝ Ազգային գվարդիան, Իրանում՝ Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը, Սիրիայում՝ պաշտպանական ջոկատները եւ Հանրապետական գվարդիան: Փաստորեն, տեղի է ունենում աշխատանքի յուրատեսակ բաժանում: Եթե կանոնավոր բանակը պաշտպանում էր երկիրն արտաքին թշնամուց, ապա էլիտային ստորաբաժանումները, հիմնականում, օգտագործվում էին երկրի ներսում ծագող անկարգությունները ճնշելու համար: Այս զուգահեռ զինված ուժերի անձնակազմը, որպես կանոն, հավաքագրվում էր վարչակարգի հետ սերտ կապ ունեցող համայնքային եւ էթնոկրոնական խմբերի ներկայացուցիչներից (Սիրիայում՝ ալաուիական փոքրամասնությունից, Սաուդյան Արաբիայում՝ ալ-Խասսա եւ էլ-Նեջդ նահանգների բնակիչներից, Իրաքում՝ Սադամ Հուսեյնի ծննդավայր Տիքրիտի շրջանում բնակվող սուննիական փոքրամասնության ներկայացուցիչներից) եւ ենթարկվում է անմիջապես երկրի ղեկավարին: Էլիտար ստորաբաժանումների զինվորները հատուկ գաղափարական մշակման են ենթարկվում, ավելի մեծ արտոնություններ ունեն, քան կանոնավոր բանակը եւ բանակի ազդեցությունը հավասարակշռող միավոր են:

Արտաքին ճնշումները նույնպես որոշակիորեն թուլացնում են բանակի դերը մերձավորարեւելյան հասարակություններում: 20-րդ դարի վերջին—21-րդ դարի սկզբին այս երկրներում տեղի է ունենում անցում դեպի ժողովրդավարություն եւ քաղաքացիական հասարակություն: Այս ամենը (նույնիսկ եթե դա կրում է զուտ իմիտացիոն բնույթ) ստիպում է իշխանություններին որոշակի քայլեր ձեռնարկել բանակի դերակատարությունը նվազեցնելու համար:

### **Բանակն ընդդեմ իսլամականության**

Այս պայմաններում զինվորականությունը ստանձնում է նոր դեր, որը թույլ է տալու նրան պահպանել իր ազդեցությունը: Բանակը Մերձավոր Արեւելքում մշտապես գտնվում է գաղափարախոսական վերահսկողության տակ: Ջինված ուժերում աշխատող գաղափարա-

խոսական աշխատակիցները եւ հատուկ հրահանգիչները զերծ են պահում այս ոլորտն իսլամիստական քարոզչության ներթափանցումից: Այն դառնում է տարածաշրջանի երկրներում անշեղորեն աճող իսլամականությանը հակազդելու ամենաիրական եւ նույնիսկ ինչ-որ չափով միակ ուժը:

Թուրքիայում բանակը, պետական հեղաշրջումների կամ դրանց սպառնալիքների միջոցով, բազմիցս պայքարել է իսլամականության աճի եւ քենալիզմի դիրքերը սասանելու դեմ (1971, 1980 եւ 1998թթ.): 1982թ. Սիրիայում միայն բանակի օգնությամբ հնարավոր եղավ ճնշել երկրում մի քանի տարի ընթացող պայքարն իսլամականների դեմ: Ալժիրում 1990-ականների սկզբին բանակը կանխեց իսլամականների հաղթանակն ընտրություններում: Եմենում, Եգիպտոսում եւ Չորդանանում, թեւ բանակն ակտիվորեն չի ներգրավված իսլամականությունը պատնեշելու գործին, սակայն, օրինակ, վերջին շրջանում հենց ռազմական դատարանների միջոցով իսլամականներին դատելու երեւոյթը կոչված էր ցույց տալու, որ անհրաժեշտության դեպքում զինվորականությունը պատրաստ է կոշտ եւ արմատական միջոցների դիմել:

Փաստորեն, ստացվում է այնպես, որ զինված ուժերը դառնում են հասարակության աշխարհիկության պահպանման ամենամեծ ջատագովը: Ուժային կառույցների եւ ուժեղ գաղափարական կուսակցությունների բացակայության պայմաններում վակուումը լցվելու է արմատական իսլամով: Եվ շատ հասարակություններ կանգնելու են հետեւյալ երկընտրանքի առջեւ՝ ավտորիտար իշխանության թուլացում, ռազմական կառույցների դերի նվազում եւ իսլամականության աճ կամ աշխարհիկ իշխանությունների պահպանման համար բանակի արտոնյալ եւ գերիշխող դիրքի հետ համակերպում: Երրորդ ճանապարհ, կարծես թե, չկա: Գոնե անուղղակիորեն դա ցույց տվեցին նաեւ վերջին դեպքերը Թուրքիայում:

## **ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑՆ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ**

### ***Արաքս Փաշայան***

Աշխարհի ամենաքիչ ազատական երկրների ցանկում են Մերձավոր եւ Միջին Արեւելքի, այդ թվում՝ արաբական երկրները, որոնք շրջանցեցին ժողովրդավարացման այն ալիքը, որով անցան Արեւելյան Եվրոպայի, Ասիայի, Լատինական Ամերիկայի շատ երկրներ 1980—1990-ականներին: Այս հանգամանքը, սակայն, որոշակիորեն նպաստում է արաբական երկրներում բարեփոխումների դիսկուրսի եւ այդ ուղղությամբ իրականացվող գործընթացների ձեւավորմանը:

Բարեփոխումների հարցն արաբական աշխարհում պայմանավորված է ներքին եւ արտաքին գործոններով: Վերջինս կապված է ամերիկյան արտաքին քաղաքականության մերձավորարեւելյան ուղղության հետ: Սեպտեմբերի 11-ից ի վեր ամերիկյան վարչակարգը շարունակում է հանդես գալ արաբական երկրներում ժողովրդավարացման պահանջով, ինչը, բնականաբար, պայմանավորված է տարածաշրջանում ԱՄՆ քաղաքական շահերով ու հետաքրքրություններով:

Արաբական աշխարհում կա բարեփոխումների ներդրման երեք հեռանկար: Առաջին դեպքում դրանք հնարավոր է իրականացնել լիբերալ ժողովրդավարական օրակարգի, երկրորդ՝ իսլամական ուղու եւ երրորդ՝ արաբական ավտորիտար վարչակարգերի միջոցով:

Բարեփոխումների անհրաժեշտության մասին միասնաբար խոսում են գրեթե բոլոր արաբական վարչակարգերը, սակայն հստակ չեն բարեփոխումների նրանց տեսլականները: Վերջիններս առաջ են քաշում պետության արդիականացման, քաղաքական, տնտեսական, կրթական, սոցիալական ոլորտներում բարեփոխումներ անցկացնելու գաղափարներ: Արաբական վարչակարգերը հայտարարում են, որ ներգրավված են ժողովրդավարական գործընթացների մեջ, սակայն իրականում այդ ուղղությամբ իրականացնում են մասնակի, ոչ արմատական քայլեր, որոնք շատ դեպքերում պարզապես փակուղի են մտնում:

Հատկանշական է, որ արաբական վարչակարգերը մերժում են ԱՄՆ-ից կամ Արեւմուտքից եկող ազատական գաղափարները՝ ժողովրդավարության սեփական եւ ուրույն ավանդույթներ ունենալու հիմնավորմամբ: Օրինակ, Եգիպտոսի արտգործնախարար Ահմադ Մահերի (2001—2004)



համոզմամբ՝ Եգիպտոսը ժողովրդավարական պետության մոդել է, եւ իրենք որեւէ մեկի փորձը ներդնելու կարիք չունեն։ Արաբական վարչակարգերը, վերահսկելով իրավիճակն իրենց հասարակություններում, ավելի շատ ձգտում են ժամանակ շահել՝ պահպանելու ներկա ստատուս քվոն։ Արաբական աշխարհում առկա տեսակետներից մեկի համաձայն՝ արաբական վարչակարգերը սպասում են ԱՄՆ 2008թ. նախագահական ընտրություններին, ինչի արդյունքում, կապված իրաքյան խնդրի հետ, կարող է որոշակիորեն վերափոխվել Միջին Արեւելքում ժողովրդավարացման ԱՄՆ արտաքին քաղաքական հայեցակարգը։

Մեկ այլ դեպքում, ինչպես նշում է Եգիպտացի վերլուծաբան Ահմադ Աբդալլահը, արաբական վարչակարգերը վստահ են, որ Վաշինգտոնն իրենց աջակցության կարիքն ունի՝ հատկապես ահաբեկչության դեմ պայքարի հարցում, այդ իսկ պատճառով զերծ կմնա ճնշումներ գործադրելուց։ Հակառակ դեպքում կհանդիպի դիմակայության։ Բացի այդ, վարչակարգերը գիտակցում են, որ ժողովրդավարության արդյունքում կարող են իշխանության գալ ԱՄՆ-ի համար անցանկալի, ասենք՝ իսլամիստական վարչակարգեր (ինչն ապացուցվում է «Համաս»-ի օրինակով)։

Բարեփոխումների պահանջով հանդես եկող իսլամական ուղու կողմնակիցների կարծիքով՝ արաբական աշխարհում առկա սոցիալ-քաղաքական բավական բարդ խնդիրներն առաջացել են «Ճշմարիտ իսլամից» հեռանալու, հասարակական-քաղաքական կյանքում իսլամական հիմնարար սկզբունքները չներդնելու պատճառով։ Նրանք արաբական աշխարհում արեւմտյան արժեքներ ներդնելը համարում են կործանարար, քանի որ արաբական աշխարհը զարգացման սեփական ուղի ունի, որ մատնանշված է Ղուրանում, մարգարեի սուլնայում, իսլամական այլ աղբյուրներում։

Ինտելեկտուալ այլ հարթության մեջ են լիբերալ բարեփոխումների կողմնակիցները, որոնք առաջ են քաշում քաղաքացիական հասարակության, ժողովրդավարության, մարդու հիմնարար ազատությունների եւ իրավունքների պահանջներ։ Նրանք այս կուրսն առաջարկում են իրականացնել հիմնականում վարչակարգերի վերափոխման միջոցով։ Ի տարբերություն իսլամականների, նրանք անհրաժեշտ են համարում ընդառաջ գնալ արեւմտյան ինստիտուտներին եւ արժեքներին, իսկ արաբական աշխարհի հետադիմության եւ առկա հիմնախնդիրների պատճառները կապում են ժամանակակից մտածողությունից նահանջ ապրելու հետ։ Այս տեսանկյունից հետաքրքրական է լիբերալ ուղղվա-

ծությամբ արաբական կայքէջի ([www.aafaq.org](http://www.aafaq.org)) հրապարակումներից մեկը, որտեղ նշված է. «Շատ են տեսակետներն այն մասին, թե արաբական հողը ծնունդ է միայն իսլամիստների կամ դիկտատոր վարչակարգերի: Մենք ասում ենք, որ կա երրորդ ճանապարհը՝ բարեփոխումների, լիբերալիզմի եւ դեմոկրատիայի ճանապարհը»: Հրապարակման մեջ արաբական հասարակությունները մեղադրվում են բարեփոխումների հնարավորություններն անժամկետ տանուլ տալու եւ իշխանություններին սատարելու մեջ:

Իրաքյան իրողությունների համատեքստում, ազատական բարեփոխումների կողմնակիցների շրջանում օրակարգային է դարձել ԱՄՆ-ի մասին ծավալվող դիսկուրսը: Հատկանշական է, որ այս հարցում ռեֆորմիստների տեսակետները տարբեր են: Նրանց մի մասը քննադատում է Մերձավոր Արեւելքում ԱՄՆ քաղաքականությունը, ժողովրդավարության տարածման ԱՄՆ երկակի չափանիշները՝ մատնանշելով իրաքյան օկուպացիան եւ այդ երկրում ժողովրդավարության ծախողված փորձը: Միաժամանակ, նրանք համոզված են, որ արաբական երկրներում միայն ժողովրդավարության հաստատմամբ հնարավոր կլինի պայքարել ԱՄՆ գերիշխանության դեմ:

Մեկ այլ շրջանակ կոչ է անում վերանայել ԱՄՆ-ի մասին արաբական/իսլամական աշխարհում առկա կարծրատիպերը: Նշվում է, որ ԱՄՆ-ի վերաբերյալ արաբների տեսական պատկերացումների եւ գործնական քայլերի միջեւ հակասություն կա: Ըստ նրանց՝ արաբները «պաշարում» են ամերիկյան դեսպանատները՝ մուտքի արտոնություն ստանալու համար, միեւնույն ժամանակ, քննադատում են այն երկիրը, որտեղ մահմեդականներն ազատ դավանում են իրենց կրոնը. արաբները ձգտում են ներդնել կրթական եւ այլ համակարգերի ամերիկյան մոդելները, բարձր տեխնոլոգիաների ամերիկյան փորձը, միեւնույն ժամանակ ԱՄՆ-ը դիտարկում են որպես թշնամի: Արաբներին բնորոշ է սխեմատիկ մտածողությունը եւ ժամանակի, այդ թվում՝ ԱՄՆ-ին վերաբերող իրողությունների ոչ ճիշտ եւ համարժեք ընկալումը: Մինչդեռ, արաբներն ամենից առաջ պետք է ճանաչեն ամերիկյան հասարակությունն ու ամերիկյան քաղաքական մշակույթը, իսկ սեփական դժվարությունների համար սովորեն պատասխանատվություն կրել:

«Աս-սիյասա ադ-դաուլիյա» եզիպտական թերթի փոխսմբազիր Ուսամա Ալ-Ղազալի Հարբը տարակուսանք է հայտնում, թե ինչու են արաբները մերժում Արեւմուտքից եկող ազատական պահանջները՝ գիտակցելով բարեփոխումների անհրաժեշտությունը, որը կապված է արաբական հասարակությունների արդիականացման, ժողովրդավա-

րության զարգացման եւ արաբա-իսրայելական հակամարտության կարգավորման հետ: «Մի՞թե սա այն չէ, ինչ ցանկանում են եւ որի մասին միշտ խոսում են արաբները»,—նշում է Չարբը:

Գիշտ է, նման մտայնությամբ ռեֆորմիստները քննադատում են Իրաքում ԱՄՆ քաղաքականությունը, սակայն, միեւնույն ժամանակ, ԱՄՆ-ը դիտարկում են մի ուժ, որը կարող է աջակցել արաբական աշխարհում ժողովրդավարացման գործընթացներին:

Ակնհայտ է, որ արաբական երկրներում կա բարեփոխումների հասարակական քննարկում: Արաբական աշխարհի արդիականացումը շատ դեպքերում կախված է քաղաքական եւ սոցիալ-տնտեսական ոլորտներում ազատական բարեփոխումներից, որոնք կարիք ունեն հասարակության աջակցության: Բացի այդ, արաբական հասարակություններին բնորոշ է պահպանողականությունը, այդ իսկ պատճառով բարեփոխումների համար ժամանակ է անհրաժեշտ:

Այս համատեքստում հստակ է, որ ամերիկյան դիսկուրսն ամենից շատ շահարկելու են արաբական վարչակարգերը եւ իսլամիստները, ովքեր արաբական/իսլամական հասարակություններում հակաամերիկյան տրամադրությունները կօգտագործեն ռեֆորմիստների դեմ պայքարում: Իսկ ժողովրդավարությունն արաբական աշխարհում, լավագույն դեպքում, առնչվում է հեռավոր ապագային:

Միեւնույն ժամանակ, բարեփոխումների շուրջ ծավալված բանավեճերի եւ պահանջների արդյունքում արաբական երկրներում որոշակի առաջընթաց է գրանցվել՝ մասնավորապես, տնտեսության եւ սոցիալական ոլորտներում, ինչպես եւ որոշակի հրատապություն ունեցող թեմաների արգելքի նահանջի հարցում:

## ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆ

Ընկերային հոգեբանությունը մեզ կ'ուսուցանե, թե զանգւածային շարժման ամենէն նպաստաւոր հիմքը բնագոյներու ոգին է. վասնզի գատ-գատ գիտակցութիւններու միաւորման եւ ամբողջացման պայմանները առաւելապէս հոս է, որ երեւան կուգան: Այդ հիմքին ամենահարազատ կերպով մօտ է ազգային զգացումը: Այդ պատճառով ալ այդ զգացումը յաճախ յենարան հանդիսացած է ամենախոր եւ տարերային թելադրանքներու, որոնք միացուցած եւ բազմացուցած են ժողովուրդները՝ զանոնք մղելով յամառ եւ երկարատեւ պայքարներու: Էական նշանակութիւն չունի այն պարագան, թէ այդ բաղխումները առաջադիմակա՞ն են, թէ՞ ոչ կամ թէ ի՞նչ եղած է ատոնց արդիւնքը: Էականը այն է, որ այդ կռիւներուն մէջ արտայայտուած է նիւթական եւ հոգեկան վիթխարի ոյժ՝ բղխած ազգային կենդանի զգացումէն: Այս զգացումի զօրութեան կանոններն են, որ ժողովուրդները կը մղէ դէպի վերածնունդը, յաղթանակը: Նոյն այդ զգացումի տկարացումն է, որ կը նախապատրաստէ անոնց անկումը, պարտութիւնը:

Նոր ժամանակը վերստին առաջին գծի վրայ դրաւ ազգայնական գաղափարը: Ըլլայ կեանքի ընդհանուր կազմալուծման առաջընթացը, որ վախ կը պատճառէ ո՛չ միայն անջատ անհատներուն, այլեւ ժողովուրդներուն, ըլլայ կեանքը հաստատուն հիմքի վրայ կառուցելու պահանջը, որ զգալի է հակառակ բոլոր հակասութիւններու եւ անջատողական ոյժերու - այսօր կը մղեն ժողովուրդները վերադառնալու ազգային գաղափարին, ասոր մէջ փնտռելով ելք մը՝ դժւարութիւններէն եւ միջոց մը՝ հակասութիւնները յաղթահարելու: Չկայ աւելի հաստատուն եւ ապահով յենակէտ այն լծակի համար, որով կուզի կատարել անցեալի աւերներու դարմանումը եւ ապագայի ճանապարհին բացումը, քան ազգային գիտակցութիւնը: Չուտ ընկերային յեղափոխութիւններն անգամ, որոնց մէջ կարծէք թէ ազգային պարագան դեր չի խաղար - այս, անգամ նման յեղափոխութիւնները, վերջին հաշւով կը ղեկավարին ո՛չ թէ յանուն վարդապետութեան մը, այլ յանուն կեանքի կազմակերպութեան, որու պահանջը կ'առաջադրի ազգային հաւաքականութեան կողմէ: Ատոր համար պատմութիւնը չի ճանչնար որեւէ ընկերային յեղափոխութիւն, որ վերջնական յաղթանակ տարած ըլլայ ազգային գաղափարի վրայ եւ որ վերջ ի վերջոյ հպատակած չըլլայ նոյն այդ գաղափարին: Այս տեսակէտով ամենաթարմ օրինակը ռուս

ընկերային յեղափոխությունն է, որու ազգայնացումը դանդաղորեն, բայց ապահով կերպով առաջ կ'ընթանայ:

Որչափ ալ ռուսական եւ գերմանական յեղափոխութեանց մղիչ ոյժերը տարբեր ըլլան՝ անոնց հետապնդած վերջնական նպատակը միեւնոյնն է - հին անհատականութեան յաղթահարումը՝ նոր հաւաքականութեամբ: Հաւաքականութիւնը, սակայն, անգամ մը ստեղծուած՝ չի կրնար թէ հոս թէ հոն չամրապնդուիլ ազգային ոգիի ձեւով, եթէ այդ ժողովուրդները կ'ուզեն ստեղծագործել:

Քանի դեռ մարդոց երակներուն մէջ արիւն կը հոսի եւ այդ արիւնը կը պարունակէ ցեղային տարր, քանի դեռ աշխարհի վրայ արեւ կայ եւ անհկա հաւասարապէս չի տաքցներ բոլորին, քանի դեռ ժողովուրդներու հոգե-ֆիզիքական առանձնայատկութիւնները կան, եւ անոնց ոյժերը, զարգացման եւ մտածման չափանիշները կը տարբերին, քանի դեռ այդ ժողովուրդները տարբեր լեզուներ կը խօսին եւ անհամահաւասարօրէն կը տեսնեն ու կ'ապրին երկինքն ու երկիրը, քանի դեռ անոնք իրենց գիտակցութեան խորքին մէջ պատմական տարբեր յիշողութիւններ ունին՝ այնքան ատեն, որչափ ալ ընկերային վարդապետութիւնները ճգնին զանոնք իրարու մօտեցնել, անոնց անցեալը պիտի բաժնէ զանոնք իրարմէ եւ ազգային զգացումն ու սկզբունքը պիտի չկորսի:

Մեր ժողովուրդի նոր վերածնունդն ալ կը հիմնուի նոյն սկզբունքի վրայ: Մենք ալ կը խօսինք ազգային միութեան, ազգային լուսաւորութեան, ազգային մշակոյթի, ազգային պետութեան մասին եւ ջանքեր կը թափենք արթնցնելու ժողովուրդի հոգեկան ոյժը, անոր ստեղծագործ աշխատանքի կամքը եւ ազգային գիտակցութիւնը: Մեր ջանքերը, սակայն, արդիւնաւոր եւ գործունէութիւնը նպատակայարմար ըլլալու համար, պէտք է նախ բացատրենք ազգային գիտակցութեան էութիւնը, անոր հոգեբանական եւ բարոյական բովանդակութիւնը:

Ազգային գիտակցութիւնը յարատեւ քանակութիւն մը չէ: Իր զարգացման ընթացքին անհկա կ'անցնի քանի մը փուլերէ, որոնք շատ կը յիշեցնեն անհատական զարգացման աստիճանները: Անհատը կը գիտակցի իր գոյութիւնը իբր առանձին բան զինքը շրջապատող աշխարհէն, որ կը պարփակէ նաեւ ուրիշ անհատականութիւններ: Այս է «ես»ին նախնական բովանդակութիւնը: Աւելի ուշ անհկա կը գիտակցի իր անհատական առանձնայատկութիւնները, որոնցմով կը զանազանուի ուրիշ անհատներէ. հոս էականը կը դառնայ ինքնարժէք անհատականութիւնը: Վերջապէս այս անհատականութիւնը կը կազմակերպուի իբր գեղակերտ միութիւն, ուր հոգեկան ընդունակութիւնները լիովին ներդաշնակուած են, իսկ հոգեւոր արժէքները ստորադասուած են

աշխարհայեցողութեան մը: Հոս գիտակցեալ անհատականութիւնը կը վերածուի անձնաւորութեան:

Ամեն անհատ չի հասնիր զարգացման այս աստիճանին: Ազգային գիտակցութեան տարրական ձեւը կը համապատասխանէ առաջին փուլին: Անիկա ունի բնազդական եւ անբանական բնոյթ եւ անուղղակիօրէն կը վերածուի, այսպէս ըսած, ազգային զգացումի: Քանի դեռ ժողովուրդը նահապետական վիճակի մէջ է եւ իր գոյութեան հետ իր բնաւորութիւնը, սովորութիւնները անպաճոյճ կերպով կ'արտայայտէ՝ անոր ազգային գիտակցութիւնը դեռ բաւական հեռու է այս զգացումէն: Ան ունի իր մտածելակերպը եւ զգացումը, իր ոճը, նիւթական եւ հոգեկան բոլոր արտայայտութեանց մէջ, բայց դեռ չունի այս ոճի եւ կերպի գիտակցութիւնը: Ասոր փոխարէն ան ունի լոկ զգացում մը՝ իր ցեղին հանդէպ, չնայած որ կ'ապրի կենցաղային իր ոճով՝ տակաւին չի գիտեր, թէ ինչի մէջ կը կայանայ անոր էութիւնը, ո՛չ ալ կը գիտակցի թէ ի՞նչ բանի է պէտք ատիկա: Հոս ինքնապահպանումի ձգտումները նախատեսալ եւ գործօն չեն, այլ աւելի շատ կրաւորական ընդդիմութիւն մը, տեսակ մը առհաւական մղումն կայ: Հոս, կարծես ժողովուրդը կը զգայ, որ իր ոգին միասնական կենցաղավարութեան մէջ է, որուն եթէ դաւաճանէ՝ դաւաճանած կըլլայ իր «հաւատք»ին:

Ազգային զգացումը արդիւնք է հաւաքականութեան, որմէ դուրս անջատ անհատին մէջ ան չի կրնար երեւան գալ: Ազգային զգացումը կը բղխի ժողովուրդի ազգակցութենէն, տոհմային կապէն, հայրենիքի աշխարհագրական եւ կլիմայական պայմաններէն, անոր լեզուի ոգիէն, աշխատանքի բնոյթէն, դաւանութենէն, սովորութիւններէն, կարճ, անոր կեանքի ընդհանուր պայմաններէն: Հոգեւոր այս հաւաքականութեան ամենահարազատ բովանդակութիւնը ազգային զգացումն է: Դա է ամենասերտ կապը հասարակութեան տարրերու եւ ասոնց անջատ-անջատ գիտակցութիւններու միջեւ: Ազգային զգացումը կը հանդիսանայ ժողովուրդի ամենախոր եւ ամենատեսական ոյժը:

Աւելի մեծ հետաքրքրութիւն կը ներկայացնէ ազգային գիտակցութեան զարգացման երկրորդ փուլը: Մինչդեռ առաջին փուլը կը կազմէ այս գիտակցութեան միամիտ, պարզունակ ձեւը, երկրորդը՝ կը ներկայացնէ անոր քննադատական ձեւը: Հոս ալ ազգային գիտակցութիւնը կը հիմնուի ազգային զգացումի վրայ, բայց հոգեբանական կառուցածքը բոլորովին տարբեր է: Անիկա լոկ զգացում եւ բնազդ չէ, այլ բաւական բարդ, բազմամասն գաղափար: Ազգային առանձնայատկութիւնները այլեւս գիտակցեալ են, հոս հասած ենք այլեւս ազգային անհատականութեան գաղափարին: Այս եւ ուրիշ ժողովուրդներու անհատականութեանց միջեւ բոլոր անջրպետները ստեղծուած են: Առանձնայատկութեանց պահպա-

նույնը գործոն էլ գիտակցած բնոյթ ստացած է. հոս բոլոր ստեղծագործ ջանքերու էլ ժողովուրդի զարգացման հիմքը ցեղն է: Ազգային գիտակցութեան մասին խօսելու պարագային՝ ընդհանրապէս նկատի կ'առնենք գիտակցութեան քննադատական ձեւը: Այդ պատճառաւ ալ աւելի մանրամասնօրէն կանգ պիտի առնենք անոր վրայ:

Քննադատական ազգային գիտակցութեան բովանդակութեան մէջ առաջին գծի վրայ ի յայտ կուգայ ժողովուրդի հոգեւոր միութեան գաղափարը: Այս միութեան ակերը բազմաթիւ են, հոս մենք պիտի յիշենք միայն կարեւորագոյնները:

Ամենախորին էլ ամենահիմնական աղբիւրը արեան ազգակա-  
նութիւնն է, այսինքն՝ միատեսակ ցեղային ծագումը: Երբեմն ազգային միութեան գաղափարը կապուած էր գերազանցապէս ծագումին: Աւելի յետոյ, սակայն, կենսաբանական այս ընթացումը տեղի տուաւ հոգեկանին էլ հազիւ այսօր, մանաւանդ Գերմանիոյ մէջ, անիկա վերստին ստացաւ իր հին նշանակութիւնը: Ըստ էութեան, որքան ալ հոգեկան կապերը եւ յարաբերութիւնները մարդկային հասարակութեան համար կարեւոր ըլլան՝ արեան ազգականութիւնն է, որ հիմնական նշանակութիւն ունի ազգային հաւաքականութեան էլ ազգային գիտակցութեան համար: Անկէ կախում ունին ժողովուրդի խառնուածքը, հոգե-ֆիզիքական հակադրեցութեան բնոյթը, անոր կրաւորականութիւնը կամ ներգործո-  
նութիւնը, անոր տոկունութեան էլ գիտակցութեան աստիճանաչափը, զննողական կարողութիւնը եւ այլն:

Եի՛շդ է, կան ժողովուրդներ, որոնք տարբեր ցեղային բաղկացութիւն ունենալով հանդերձ՝ զօրաւորապէս կ'արտայայտեն ազգային գիտակ-  
ցութիւնը, ասիկա կը ցուցանէ, թէ արեան ազգականութիւնը միակ ազդակը չէ, որմէ կախում ունի այս գիտակցութիւնը, ասիկա, սակայն, չի կրնար ծառայել իբր հակաապացոյց ընդդէմ արեան ազգականութեան, որ կը կազմէ ազգային գիտակցութեան կենսաբանական հիմքը:

Ֆիզիքական ուրիշ ազդակ մը, որմէ կախում ունի ազգի մը հոգեկան միութիւնը հայրենի երկիրն է, աշխարհագրական ընդհանուր պայմաններն են - կլիման, տեսարանները, դաշտավայրերը, լեռները, ջրերը: Ռուսաս-  
տանի կլիմայական պայմաններու ընդարձակ վետվետումներով կը բացատրուին ռուս ժողովրդի նկարագրի ծայրայեղութիւնները, անոր հակումը դէպի ջանասիրութիւնը եւ միաժամանակ դէպի անտոկունու-  
թիւնը: Անգլիոյ խոնաւ եւ մառախլապատ կլիմայով, որ տպաւորութիւն-  
ները անյստակ եւ անգոյն կ'ընէ, կը բացատրուի անգլիացիներու ձեւի եւ գոյնի զգացողութեան պակասը: Ռուսաստանի անձայրածիր տափաս-  
տաններով կը բացատրուի ռուս հոգիի ընդարձակութիւնը, անոր հակումը կրօնականութեան եւ խորհրդապաշտութեան:

Ազգային միութեան գաղափարը կը պայմանաւորուի նաեւ լեզւի ընդհանրականութեամբ: Հոս ալ կրնանք օրինակներ ցոյց տալ, որոնք կարծէք կը հակասեն վերի տեսակետին - օրինակ, Սիացեալ Նահանգներ, Ջիզերիա, նախկին Աւստրելիոնգար կայսրութիւնը: Բայց հոս, լեզւի դերը այս ժողովուրդներու հոգեկան միութեան տեսակետով, կը կայանայ միայն պաշտօնական լեզուն սովորելու ձգտումին մէջ, քանի որ ան պարտադրական է կեանքի եւ բանակի մէջ: Հոն, ուր ժողովուրդները կը գործածեն մէկէ աւելի լեզուներ եւ կը մնան իրենց տոհմային զանազանութիւններով՝ ազգային միութեան գիտակցութիւնը շատ կը դժվարանայ: Լեզւի նոյնութիւնը, անոր գործածութիւնը իբր ընդհանրացման միջոց, անուղղակի կերպով, հոգեկան բոլոր արժէքները կը յանձնէ ժողովուրդին: Առաջին պարագային լեզուն ժողովուրդի գիտակցութեան վրայ կ'ազդէ մեքենայական կապով, երկրորդ պարագային՝ առանձնապատուկ արժէքով եւ ուրոյն գեղեցկութեամբ: Թէ առաջին եւ թէ երկրորդ պարագաներուն լեզուն ամենէն շատ կ'ազդէ ազգային ոգիի յատկանշական յուզումներով, իր զգացողական եւ արտաքին երանգով, կլիմայի եւ հայրենի տեսարաններու արտացոլումով եւ մտքի ու գաղափարներու բովանդակութեամբ, ուր պարփակուած են անցեալ սերունդներու, մեր նախահայրերու եւ հայրերու դարաւոր կեանքի փորձառութիւնները:

Ժողովուրդի մը հոգեւոր միութիւնը կախում ունի նաեւ անոր ընդհանուր պատմութենէն: Ինչպէս նոյնատեսակ վերապրումները անջատ անձնաւորութիւններ իրարու կը մօտեցնէ՝ այդպէս ալ պատմական ընդհանուր դէպքերը հոգեպէս իրարու կը կապէ ազգակիցները: Պատմական ընդհանուր փորձառութիւնը միատեսակօրէն կը մշակէ անջատ գիտակցութիւնները եւ զանոնք նոյնատեսակ յարաբերութեան մէջ կը դնէ աշխարհի եւ կեանքի հանդէպ: Այսպէս, սերունդներու վրայ կ'ազդեն ո՛չ միայն անոնց անձնական վերապրումները, այլ եւ անցեալի պատմութիւնը եւ պատմական աւանդութիւնները: Ժողովուրդի պատմական յիշողութիւններն են, որ անցեալը կը կապեն ներկային՝ յանձնելով ապագային:

*(շարունակելի)*

**«ՏԱՐՕՆԻ ԱՐԾԻԻ»,**  
**Սոֆիա, 1939թ.**



## **Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

### **Գազիկ Տեր-Հարությունյան**

**ԼԴՀ ՇՈՒՐՋ ԸՆԹԱՑՈՂ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ . . . . 1**

### **Ռուբեն Մելքոնյան**

**ՀԱՅ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԻՍԼԱՄԱՑՈՒՄԸ**

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ . . . . . 4**

### **Հարություն Մարությունյան**

**ՀՈԼՈՔՈՍՏԻ ՄԱՍԻՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆ**

**ԻՍՐԱՅԵԼՈՒՄ. ՅԱԴ ՎԱՇԵՄ . . . . . 9**

### **Դավիթ Հովհաննիսյան**

**«ՄԵԾ ՈՒԹՆՅԱԿԻ» ՀԱՆԴԻՊՈՒՄԸ.**

**ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ . . . . . 15**

### **Սարգիս Հարությունյան**

**ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ . . . . . 21**

### **Սուրեն Մանուկյան**

**ԲԱՆԱԿԻ ԴԵՐԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ . . . . . 27**

### **Արաքս Փաշայան**

**ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑՆ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ . . . . . 32**

**ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆ . . . . . 36**

*Շապիկի վրա պատկերված են  
Վանա լճի Լիմ կղզին եւ Սիփան լեռը*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ**  
Երեւան, 375010, Սելիք-Ադամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:  
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:  
Պայմանական 3,25 մամուլ: Տպաքանակը՝ 1000:  
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:  
Վկայական՝ ՕՄՍ 000176:  
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: